Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 33 (2043) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 9, 2023
VOLUME 43, NO. 33 (2043) SATURDAY SEPTEMBER 9, 2023
Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի
MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

# Ռուսաստանը Չի Պատրաստուիր Հեռանալու Հարաւային Կովկասէն. Փեսքով



Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փեսքով

Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փեսքով յայտնած է, որ Ռուսաստանը չի պատրաստուիր հեռանալու Հարաւային Կովկասէն:

Փեսքով այս մասին խօսած է՝ արձագանգելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի այն յայտարարութեան, թէ տեսնում են, որ Ռուսաստանը իր կողմէ ձեռնարկուող կամ չձեռնարկուող քայլերուն բերումով ինք կը հեռանայ Հարաւային Կովկասի տարածաշրջանէն:

«Մենք խոր յարգանք կը տածենք վարչապետ Փաշինեանի նկատմամբ, կը գնահատենք անոր եւ նախագահ Փութինի աշխատանքային եւ շատ կառուցողական յարաբերութիւնները, բայց այդ թեզերուն հետ չենք կրնար համաձայնիլ: Ռուսաստանը որեւէ տեղ երթալու չի պատրաստուիր: Ռուսաստանը կը շարունակէ հետեւողական, շատ կարեւոր դեր խաղալ իրավիճակի կայունացման եւ հակամարտութեան վերացման գործին մէջ: Այս ծիրին մէջ կարեւոր է տարածաշրջանի բոլոր պետութիւններուն յանձնառութիւնը Լեռնային Ղարաբաղի հարցով եռակողմ յայտարարութիւններուն: Նոր իրադարձութիւններ եղած են, որոնք որոշակիօրէն փոխած են իրավիճակը, սակայն այդ չի նշանակեր, թէ Ռուսաստանը ինչ-որ կերպ կը շեղի իր գործունէութենէն», ըսած է ան:

Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղարին խօսքով՝ Ռուսաստանը պիտի շարունակէ տանիլ Հարաւային Կովկասի մէջ, մասնաւորապէս Լեռնային Ղարաբաղի մէջ անվտանգութեան երաշխաւորի դերը:

Փեսքով նաեւ նշած է, որ Ռուսիոյ մէջ աւելի շատ հայեր կ՚ապրին, քան Հայաստանի մէջ, որոնք իրենց ներդրումը ունին Ռուսաստանի զարգացման գործին մէջ:

Ան նաեւ յիշեցուցած է, որ Երեւանը կը մասնակցի համարկման գործընթացներուն, որոնց շնորհիւ «Հայաստանը ԱՊՀ-ի մէջ ախոյեան դարձած է զարգացման քայլերով»:

# Ատրպէյճանի Նպատակը Լեռնային Ղարաբաղը Հայաթափելն է Հիմնազուրկ Են ԼՂ-ի Հիմնախնդրի Յանգուցալուծուած Ըլլալու Մասին Բոլոր Յայտարարութիւնները. Փաշինեան

Շաբաթավերջին իր ունեցած երկու ելոյթներով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի եւ տարածաշրջանային հարցերուն:

Հայաստանը կ՚ակնկալէ, որ միջազգային հանրութիւնը ջանքեր կը գործադրէ՝ թոյլ չտալու Լեռնային Ղարաբաղի մէջ ցեղային զտումներու քաղաքականութեան իրականացումը, Արցախի անկախութեան հռչակագրի ընդունման օրուայ առիթով տարածած իր ուղերձին մէջ յայտարարեց Հայաստանի վարչապետը:

Փաշինեան շեշտեց որ, Ղարաբաղի ժողովուրդը ցեղային զտման առջեւ կանգնած է Լաչինի միջանցքի շրջափակման, առաջին անհրաժեշտութեան սննդամթերքի, գազի եւ ելեկտրականութեան մատակարարումներու Դադարեցման պատճառով:

«Ցանկանում եմ եւս մէկ անգամ ընդգծել՝ հիմնազուրկ են Լեռնային Ղարաբաղի՝ որպէս տարածքային միաւոր գոյութիւն չունենալու եւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի յանգուցալուծուած լինելու մասին բոլոր յայտարարութիւնները, քանի դեռ անբեկանելիօրէն հասցեագրուած չեն ԼՂ հայութեան անվտանգութեան եւ իրաւունքներու պաշտպանութեան խնդիրները», - յայտարարեց վարչապետը:

Փաշինեանի խօսքով՝ Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը եւ



Փաշինեան իտալական «La Repubblica» թերթին հետ հարցազրոյցի ընթացքին

միջազգային հանրութիւնը յստակ կ՚արձանագրեն, որ հակամարտութեան համապարփակ ու երկարատեւ կարգաւորումը պէտք է տեղի ունենայ բացառապէս խաղաղ գործընթացի, այդ շարքին՝ միջազգային գործընթացի ներքեւ՝ Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան միջոցով:

«Այսօր մենք մեր գնահատանքի խօսքն ենք ասում Լեռնային Ղարաբաղի մեր բոլոր հայրենակիցներին, եւ մեր խնդիրն է՝ խաղաղ, քաղաքակիրթ միջոցներով, բանակցային եղանակով ապահովել խաղաղ ապրելու եւ արարելու նրա անօտարելի իրաւունքը», - ըսաւ Փաշինեան:

Փաշինեանի Լեռնային Ղարաբաղի անկախութեան հռչակագրին նուիրուած ուղերձին Պաքուն արձագանքեց ըսելով թէ, Հայաստանի վարչապետը կասկածի տակ դրած է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը:

«Մենք վճռականօրէն կը քննադատենք եւ կը մերժենք Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ 2023 թուականի Սեպտեմբերի 2-ին հրապարակուած ուղերձը, որը Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան հանդէպ ունեցած պահանջներու, ինչպէս նաեւ Ատրպէյճանի ղարաբաղեան տարածաշրջանին մէջ անջատողականութեան խրախուսման հերթական վկայութիւնն է», - ըսուած է Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարութեան յայտարարութեան մէջ:

## Իտալական «La Repubblica» Թերթին Հետ Հարցազրոյցը

Ատրպէյճանի նպատակը Լեռնային Ղարաբաղը հայաթափելն է, եւ այդ է պատճառը, որ, ըստ էութեան, արհեստական մարդասիրական ճգնաժամ ստեղծուած է՝ Լաչինի միջանցքը ապօրինի արգելափակելու միջոցով, յայտնեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը իտալական «La Repubblica» թերթին հետ հարցազրոյցին:

Ընդգծելով, որ Ատրպէյճանը չի կատարեր Արդարադատութեան Միջազգային Դատարանին Փետրուարի 22-ին կայացուցած որոշումը, որ վերահաստատուած է Յուլիս 6-ին, Փաշինեան նշեց, որ այդ կու գայ վկայելու նաեւ «միջազգային իրաւակարգի ճգնաժամի մասին, որովհետեւ, եթէ դատարանի պարտադիր իրաւական ուժ ունեցող որոշումը չի կայացուիր, նման

Շար.ը էջ 5

# Գոնկրէսի Մարդու Իրաւունքներու Յանձնաժողովի՝ ԼՂ Հարցով Նիստին Պիտի Մասնակցի Լուիս Մորենօ Օքամփօն

ԱՄՆ Գոնկրէսի Մարդու Իրաւունքներու Յանձնաժողովը պիտի քննարկէ իրավիճակը Լեռնային Ղարաբաղի մէջ՝ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով:

Լսումներուն հրաւիրուած է Միջազգային Քրէական Դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օքամփօն, որուն զեկոյցը մէջբերած է Ներկայացուցիչներու Տան յանձնաժողովը:

Միջազգային Քրէական Դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օքամփօն Օգոստոս 7-ին հրապարակած է փորձագիտական եզրակացութիւն՝ նշելով, որ ««ողջամիտ հիմք կայ պնդելու, որ Լեռնային Ղարաբաղի մէջ բնակող հայերուն նկատմամբ այժմ ցեղասպանութիւն կ՚իրականացուի:

Լսումներու երկրորդ բանախօսն է Գոլումպիայի համալսարանի՝ «Վայրագութիւններ Արցախի մէջ» հետազօտական ծրագրի ղեկավար, փրոֆեսոր Տէյվիտ Ֆիլիփսը:

Լսումները բաց պիտի ըլլան



Միջազգային Քրէական Դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օքամփօ

Գոնկրէսի անդամներու, Գոնկրէսի աշխատակազմի, շահագրգիռ հանրութեան եւ լրատուամիջոցներու համար: Լսումները ուղիղ պիտի հեռարձակուին Յանձնաժողովի կայքով:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ**

# Արցախի Փրկութեան Ծրագրի Փոխարէն՝ Կենացներ, Երգեր եւ Ատելութեամբ Լի՝ Վրէժի Կոչեր

Յ.Մ.

*Արցախի անկախութեան տարեդարձին առթիւ ՀՅԴ-ի հրաւիրած հանրահաւաքը, ինչպէս կանխատեսւում էր, «Արցախ» բառը հոլովելով, Արցախում ստեղծուած իրավիճակը շահարկելով, օրուայ խորհուրդը պատրուակ օգտագործելով ՀՀ-ում իշխանափոխութեան հարցը նորից օրակարգ բերելն էր: Յատկանշական է, որ ռուս-ատրպէյճանական համատեղ օպերացիայի հետեւանքով հումանիտար աղէտի գօտու վերածուած Արցախի փրկութեան համար որեւէ կոնկրէտ ծրագիր, ճանապարհային քարտէզ այդպէս էլ չհնչեց հանրահաւաքում ելոյթ ունեցած արցախասէրների կողմից:*

*Հանրահաւաքի կազմակերպիչները, մինչդեռ, հոգացել էին, որ միջոցառման ժամանակ հնչեն իշխանութեան նկատմամբ ակնյայտօրէն ատելութեամբ լցած ու վրէժի կոչող ելոյթներ: 44-օրեայ պատերազմում զոհուած զինուորներից մէկի՝ Վաչագան Մանուկեանի հայրը՝ Խաչիկ Մանուկեանն, օրինակ, առաջարկեցգ «ՔՊ-իստներին տանք, Արցախն ու Հայաստանը պահենք: Եւ ինչքան շուտ տանք, էնքան մենք յաջողութիւններ շուտ ենք ունենալու»: Նրա այս՝ «փրկութեան ծրագիրը» «այո»-ներով ու ծափահարութիւններով ընդունեցին հանրահաւաքի մասնակիցների կողմից, որոնց թւում էին նաեւ ՀՀ նախկին նախագահներ Սերժ Սարգսեանն ու Ռոբերտ Քոչարեանը: Ի դէպ, մինչեւ հանրահաւաքի մեկնարկը Սերժ Սարգսեանը կրկին յայտնեց իր հաւատարմութիւնը իշխանափոխութեան օրակարգին, շարունակեց պահանջել, որ Նիկոլ Փաշինեանը հրաժարական տայ: Նախկին նախագահը, սակայն, մէկ պարզ ու շատ կարեւոր հարցի՝ ին՞չ լուծում էք առաջարկում ստեղծուած իրավիճակում՝ այդպէս էլ յօդաբաշխ պատասխան չտուեց՝ ցրելով լրագրողի հարցըգ «մամուլ նայու՞մ էք դուք, ես դրա մասին բազմաթիւ անգամ ասել եմ, հիմա կրկնեմ, ին՞չ ասեմ, պտի փոխուի Հայաստանի ղեկավարութիւնը, եւ դրանից յետոյ ամէն ինչ կ'ընկնի իրայ տեղը»: Արդ, որ՞ն է ՀՀ մերժուած նախագահի եւ ռեւանշիստ միւս ընդդիմադիր գործիչների «լուծումը»գ ըստ էութեան՝ այն, ինչի մասին վերջիններս աղաղակում են 2018-ի յեղափոխութիւնից եւ մասնաւորապէս 44-օրեայ պատերազմից յետոյ՝ «Նիկոլ, հեռացիր, իշխանութիւնը տուր մեզ, կը գանք, մենք մեր իմացածով «սաղ կը քցենք տեղը», կամ, ինչպէս կ'ասէր ՀՀ երկրորդ նախագահը՝ «երկիրը նորից թարազուի կը բերենք»: Բայց թէ ինչն ինչպէս են պատրաստւում «տեղը գցել», եւ ամենակարեւորը՝ ումով, այդպէս էլ պարզ չի դառնում: Օրինակ, քիլլեր են վարձելու Ալիեւին լիկուիտացնե՞ն՝ ազատուելով դէստրուկտիւ բանակցողից եւ բանակցութիւնները սկսելով «սեփական կէտից», մահապարտների բրիկա՞տ են ուղարկելու Լաչինի միջանցքը բացելու համար՝ ստանձնելով այդ բրիկատի հրամանատարութիւնը, Պուտինին են բաշխելու ՀՀ ինքնիշխանութեան վերջին փշրանքնե՞րը, թ՞է դիմելու են այլմոլորակային քաղաքակրթութիւններին՝ ակնկալելով նրանց վերերկրային միջամտութիւնը Արցախի փրկութեան հարցում:*

*Հանրահաւաքում իր մտքի գոհարներով փայլատակեց մէկ այլ ընդդիմադիր գործիչ՝ ՀՓՇ-ի չկայացած վարչապետ Վազգէն Մանուկեանը, եւ, ինչպէս միշտ, մեղանչեց ճշմարտութեան ու բարոյականութեան առաջ: Նա նախ 120 հազար արցախցիների պայքարը համաշխարհային պատմութեան էջերում «ոսկի տառերով գրուելու արժանի» վարքագիծ համարեց, ապա դարձաւ ՀՀ իշխանութեան ցուցաբերած վարքագծին եւ, թող ներուի ասել՝ բարբաջեցգ «իսկ ինչ է այդ ժամանակ յայտարարում ՀՀ ղեկավարութիւնը, պարզ բան՝ Ղարաբաղը թողնենք, խաղաղ ապրենք: Դա ոչ միայն բարոյական, քաղաքական, ազգային տեսակէտից սխալ է, դա սխալ է ի սկզբանէ, որովհետեւ Ատրպէյճանի ծրագիրը պահանջում է երկուսի ոչնչացումը, չարի վերջը, յիմար կկուի պատմութիւն:*

*Արցախի այս պահուածքը բերեց նրան, որ հիմա ամբողջ աշխարհը հետաքրքրւում է Արցախով: Քո հետ խօսում են, հաշուի են նստում, եթէ դու քեզ ամուր, յամառ ես պահում: Հիմա քանի որ այդպիսի վիճակ է, նոր բան է Նիկոլը մտածել, ասում է՝ մենք պէտք ա անենք համաշխարհայինգգ ինչ- որ միջազգային կառոյցներ, որոնք կ'ապահովեն Արցախի բնակչութեան անվտանգութիւնը: Սուտ է ասում, չկայ այդպիսի բան, ռուսական բանակը այնտեղ կանգնած է, այդ խնդիրը չի կարողանում լուծել, ֆրանսիացիները չեն կարողանում բեռներն անցկացնել, էդ ո՞նց է էդ խնդիրը միջազգային կարգով լուծւում, դա անլուծելի խնդիր է»:*

*Վազգէն Մանուկեանը, փաստօրէն, Արցախի հարցի վերաբերեալ ՀՀ դիրքորոշման մասին տեղեկացուած չէ, այլապէս վերոնշեալ կցկտուր նախադասութիւնը չէր արտածի: «Միջազգային, համաշխարհային կառոյցներ» ասելով, ենթադրում ենք, նկատի ունի միջնորդ երկրների առաջարկը Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան մասին, որի առնչութեամբ ՀՀ կառավարութիւնն իր հերթին առաջարկում է՝ երկխօսութիւնը պէտք է տեղի ունենայ միջազգային մեխանիզմի կիրառմամբ, միջազգային դերակատարների երաշխաւորութեամբ: Եթէ այս պարզ եւ լեգիտիմ առաջարկի էութիւնը Վազգէն Մանուկեանի պէս խորաթափանց գործիչը ի վիճակի չէ ըմբռնել, ապա լաւ կ'անի դադարի զբաղուել դաւադրապաշտական մտավարժանքներով, յատկապէս՝ հանրահաւաքների հարթակներից, դրանք Արցախին բացի վնասից հաստատ օգուտ չեն բերի: Երկրորդ՝ Մանուկեանին ուզում ենք յիշեցնել, որ ՀՀ իշխանութիւններն են միջազգային հարթակներում եւ կառոյցներում ներկայացնում եւ պաշտպանում Արցախի, 120 հազար արցախցիների անվտանգութեան եւ իրաւունքների հարցը, դիմում միջազգային դատական ատեաններին եւ հետամուտ լինում Արցախում ստեղծուած իրավիճակի հետեւողական միջազգայնացմանը: Իսկ ին՞չ են անում Մանուկեանն ու նրա միւս ընդդիմադիր գործիչները՝ բացի Երեւանի կենտրոնում միկրոֆոնների առաջ կտրիճ կտրելուց: Ոչին՛չ:*

*ՀՀ պաշտպանութեան նախկին նախարար Մանուկեանի մտքի յաջորդ փայլատակումը, որին արդէն*

Շար.ը էջ 14

# Զոհեր Դժբախտաբար Կային, Երբ Դեռ Չկար «Խաղաղութեան Օրակարգ»

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Սահմանային լարուածութիւնների հետեւանքով զոհեր ունենալու ցաւագին, ողբերգական իրողութիւնների հանդէպ հանրային արձագանքները, թէ՝ դրանք «խաղաղութեան օրակարգի զոհերն են», եւ այդօրինակ այլ «կապակցումները», թերեւս անհամարժէք են իրավիճակին ու խնդրի էութեանը: Անկասկած է, որ զգայական առումով այդօրինակ արձագանքները հասկանալի են, սակայն դրանք պրագմատիկ տեսանկիւնից կտրուած են իրականութիւնից եւ նաեւ չունեն իրականութիւն փոխելու դրական ազդեցութիւն: Դա ակնառու է դարձնում մի օրինակ, անցնող տասնամեակի օրինակը: 2013-14 թուականներից սկսած, Ատրպէյճանը վարում է ուժային շանտաժի, պարզապէս մարդասպանութեան քաղաքականութիւն, սահմանին, շփման գծում՝ զոհերի յանգեցնող ողբերգական միջադէպերը, դիվերսիաները, հրաձգութիւնները աւելի ու աւելի ինտենսիվանում էին, աւելի մեծանում էր բախումների տրամաչափը:*

*Մինչդեռ, Հայաստանի քաղաքական ղեկավարութիւնն այն ժամանակ ամենեւին «խաղաղութեան օրակարգի» նշանաբանով չէ, որ առաջնորդւում էր, թէեւ Հայաստանն ի հարկէ միշտ էլ արտայայտուել է խաղաղութեան, այլ ոչ պատերազմի դիրքից: Բայց, այն ժամանակ էլ պարբերաբար՝ զոհեր, վիրաւորներ: Պարզապէս, այն ժամանակ Հայաստանը յաղթանակած դիրքում էր, ինչը իր ազդեցութիւնն էր թողնում իրավիճակի հանդէպ հանրային ընկալումների եւ գնահատման վրայ: Այն ժամանակ զոհերի յանգեցրած միջադէպերը պատճառում էին նոյնքան ցաւ, բայց միաժամանակ ընկալւում էր, որ տղաները զոհւում են յաղթանակը պահելու համար, ու քանի դեռ յաղթանակը կար՝ որոշակիօրէն մեղմում էր կորստի ցաւը, բթացնում այն: Այսինքն, կար որոշակի թէ զգայական, թէ նաեւ ի հարկէ ռացիոնալ տրամաբանութեամբ կառուցուող ընկալման մի առանցք:*

*Այդպիսով, խնդիրը «խաղաղութեան օրակարգը» չէ, այլ գլխիվայր շրջուած իրավիճակը եւ ուժերի նոր բալանսը: Եթէ Հայաստանի քաղաքական ղեկավարութիւնը յայտարարի, թէ չունի ոչ մի խաղաղութեան օրակարգ էլ, միեւնոյն է, Ատրպէյճանը շարունակելու է նոյն կերպ, եւ թերեւս աւելի անկաշկանդ: Որովհետեւ, Ատրպէյճանի համար ուժային բախումը ուժերի անհաւասարակշռութիւնը առաւել լեգիտիմ օգտագործելու ամենապատեհ առիթն է: Հետեւաբար, եթէ չկայ «խաղաղութեան օրակարգ», դա չի նշանակում, թէ չկան, չեն լինելու զոհեր: Առաւել եւս, որ ատրպէյճանական կողմի զոհերը Ալիեւի համար երբեք էլ չեն եղել առանձնապէս մտահոգութեան առարկայ, մարդկային կեանքը նրա համար՝ ինչպէս եւ բոլոր բռնապետների եւ խաների համար, չի ունեցել էական արժէք: Նա փակել է «ռազմաճակատը» ատրպէյճանական հանրութեան համար եւ գործում է ըստ քաղաքական հայեցողութեան:*

*Ըստ այդմ, խնդրի նուազագոյն լուծումը ուժերի հաւասարակշռութիւնն է, բայց այդ միջոցով ոչ թէ զոհերից խուսափելու պատրանքով, այլ դիւանագիտական այնպիսի ռեժիմի գալու հաշուարկով, որը կ'ապահովի հաւասարակշռուած խաղաղութիւն ենթադրող համաձայնութիւններ: Ցաւօք սրտի, միջազգային իրավիճակն այսօր այնպիսին է, որ չկայ այդօրինակ խաղաղութեան հեռան-*

Շար.ը էջ 14

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

## Յունուար-Յուլիսին Հայաստան Մուտք Գործած Ամենամեծ Թիւով Քաղաքացիները ՀՀ Քաղաքացիութիւն Ունեցողներն Են

Վիճակագրական կոմիտէն 2023թ. Յունուար-Յուլիս ամիսներու կտրուածքով ամփոփած է հիմնական ժողովրդագրական ցուցանիշներն ու ներկայացուցած է բնակչութեան բնական շարժի եւ ՍԷԿՏ համակարգով ստացուած սահմանային գրանցումներու վերաբերեալ նախնական տուեալները: Civic.am-ը Վիճակագրական կոմիտէի կայքէն տեղեկացաւ, որ 2023թ. Յունուար-Յուլիսին կենսունակութեան գործակիցը՝ ծնածներու եւ մահացածներու յարաբերակցութիւնը, կազմած է 141%, նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին արձանագրուած 118.6 %-ի համեմատ:

Յունուար-Յուլիսին ծնած է 20.111 մարդ, մահացած՝ 14.265 մարդ: Համեմատութեան համար նշենք, որ նախորդ տարի՝ 2022-ի նոյն ժամանակահատուածին ծնած է 19.492 մարդ, մահացած՝ 16.435 մարդ: 2023թ. բացարձակ ցուցանիշի փոփոխութիւնը 2022-ին ծնածներու նկատմամբ կազմած է 103,2, մահացածներու նկատմամբ՝ 86,8 տոկոս: Բնական յաւելաճը 2023-ի Յունուար-Յուլիսին կազմած է 58463 մարդ՝ 2022-ի նոյն ժամանակաշրջանի համեմատ՝ 1,9 անգամ: Հաշուետու ժամանակաշրջանին արձանագրուած է ամուսնութեան 9.156, ամուսնալուծութեան՝ 2.590 դէպք:

2023թ. Յունուար-Յուլիսին ՀՀ մուտք գործած է 2.645.161, ելք կատարած է 2.606.902 մարդ: Ըստ քաղաքացիութեան երկրի՝ ՀՀ մուտք գործած ամենամեծ թիւով քաղաքացիները ՀՀ քաղաքացիութիւն ունեցողներն են՝ 1.049.587 մարդ, ՀՀ քաղաքացիութիւն ունեցող 1.086.338 մարդ ալ ելք կատարած է Յունուար-Յուլիսին: Հաշուետու ժամանակաշրջանին Ռուսիոյ քաղաքացիութիւն ունեցող 984.216 մարդ մուտք գործած է մեր երկիր, ելք կատարած է 939.820 մարդ, Վրաստանի քաղաքացիութիւն ունեցող 201.811 մարդ մուտք ունեցած է, ելք կատարած է 196.855-ը: Ըստ թուաքանակի մեծութեան՝ յաջորդիւ Իրանի, այնուհետեւ ԱՄՆ քաղաքացիներն են, ապաեւ՝ Ուքրանիոյ, Հնդկաստանի, Ֆրանսայի, Գերմանիոյ, Պելառուսիոյ, Մոլտովայի, Չինաստանի քաղաքացիութիւն ունեցող քաղաքացիները:

## Մոսկուան Երեւանէն Պարզաբանում Խնդրած Է Հռոմի Կանոնադրութիւնը Խորհրդարանի Վաւերացման Ուղարկելու Քայլին Առնչութեամբ

Մոսկուան պարզաբանում խնդրած է Երեւանէն՝ Հայաստանի կառավարութեան կողմէ Հռոմի կանոնադրութիւնը խորհրդարանի վաւերացմանն ուղարկելու քայլին առնչութեամբ:

Այս մասին ճեպազրոյցին յայտնած է Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք այս հարցով արդէն պարզաբանում խնդրած ենք հայկական կողմէն եւ պիտի որոշենք մեր հետագայ քայլերը՝ ելլելով Երեւանի պատասխանին բովանդակութենէն», ըսած է Զախարովան:

Հայաստանի կառավարութիւնը Հռոմի կանոնադրութիւնը խորհրդարանի վաւերացման ուղարկած է Սեպտեմբեր 1-ին:

Հռոմի կանոնադրութիւնը վաւերացնելու միջոցով Հայաստանի կառավարութիւնը Ատրպէյճանին պատասխանատուութեան կանչելու հնարաւորութիւն կը տեսնէ:

Միջազգային Քրէական Դատարանը Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը ձերբակալելու հրահանգ տուած է, ինչ որ կը նշանակէ, որ այն երկիրներուն մէջ, որոնք վաւերացուցած են Հռոմի կանոնադրութիւնը, Ռուսիոյ նախագահը կրնան ձերբակելել:

## Պապիկեան Ներկայացուցած Է Պաշտպանութեան Բնագաւառին Մէջ Հայ-Հնդկական Համագործակցութեան Հեռանկարները

Օգոստոս 30-ին ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան ընդունած է Հայաստանի Հանրապետութիւն այցելած Հնդկաստանի ազգային պաշտպանական քոլեճի պատուիրակութիւնը:

Պատուիրակութեան ուղեկցած է նաեւ Հայաստանի մէջ Հնդկաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Նիլաքշի Սահա Սինհան: Պաշտպանութեան նախարարը ողջունած է Հնդկաստանի ազգային պաշտպանական քոլեճի հրամանատար, զօրավար-լեյթենանթ Սուքրիթի Սինկհ Տահիյան եւ Հնդկաստանն ու այլ գործընկեր երկիրները ներկայացնող ունկնդիրները: Սուրէն Պապիկեանը բարձր գնահատած է Հայաստան այցելութեան նախաձեռնութիւնը՝ հաշուի առնելով պաշտպանական բնագաւառին մէջ հայ-հնդկական յարաբերութիւններու զարգացման ներկայիս ընթացքը:



ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան

Հանդիպման ընթացքին պաշտպանութեան նախարարը ներկայացուցած է բանակին մէջ մեկնարկած բարեփոխումները եւ պաշտպանութեան բնագաւառին մէջ հայ-հնդկական համագործակցութեան ընթացքն ու հեռանկարները, ինչպէս նաեւ պատասխանած է պաշտպանական քոլեճի պատուիրակութեան՝ վերոնշեալ ոլորտներուն եւ տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցումներուն:

## Ընդդիմութեան Հանրահաւաքին Ներկայ Եղած Է Շուրջ 10.500 Հոգի



Ընդդիմութեան հանրահաւաքի մաբակիցները «Ազատութեան» հրապարակին վրայ

Երկար դադարէ ետք, Շաբաթ երեկոյեան Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ տեղի ունեցաւ նախկին ռեժիմը ներկայացնող ընդդիմութեան հանրահաւաքը, որուն ներկայ եղան Ռոբերդ Քոչարեանը եւ Սերժ Սարգսեանը:

Ելոյթ ունեցողները խօսեցան Արցախի հարցի մասին՝ քննադատելով ներկայ իշխանութիւններու վարած քաղաքականութիւնը՝ միաժամանակ պահանջելով վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը:

Ըստ Իրազեկ Քաղաքացիներու Միաւորումի հաշուարկներուն, հանրահաւաքին ներկայ եղած են շուրջ 10.500 հոգիներ:

## 44-Օրեայ Պատերազմին Ընթացքին Բարձրաստիճան Սպաները Պայմաններ Ստեղծած Են, Որպէսզի Ենթակայ Անձնակազմը Մարտի Ժամանակ Հրաժարի Զէնքով Գործելէ.

ՀՀ Քննչական կոմիտէի զինուորական քննչական գլխաւոր վարչութեան յատկապէս կարեւոր գործերու քննութեան վարչութեան մէջ քննուող քրէական վարոյթի նախաքննութեամբ պարզուած է, որ ՀՀ ՊՆ «N» բանակային զօրաբաժանումներէն մէկուն հրամանատարի տեղակալի պաշտօնը զբաղեցուցած, կոչումով գնդապետ բարձրաստիճան սպան, ՀՀ Զինուած Ուժերու ներքին ծառայութեան կանոնագիրքի, այլ ղեկավար նորմատիւ ակտերու դրոյթներու համաձայն հանդիսանալով պետ ենթակայ անձնակազմին համար, օժտուած ըլլալով կազմակերպական-տնօրինչական գործառոյթներով, ունենալով հրամաններ, կարգադրութիւններ տալու եւ անոնց կատարումը ապահովելու իրաւասութիւն, 2020 թուականի Սեպտեմբեր 27-ին ՀՀ կառավարութեան N 1586-Ն որոշմամբ յայտարարուած ռազմական դրութեան ժամանակ առանձնապէս ծանր յանցանք կատարելու մասին նախնական համաձայնութիւն ձեռք բերած է ՀՀ ՊՆ «N» զօրամասի հրամանատարի տեղակալի պաշտօնը զբաղեցուցած, կոչումով փոխգնդապետ բարձրաստիճան սպայի հետ: Համաձայնութիւնը կայացած է անոր մէջ, որպէսզի դիտաւորութեամբ պայմաններ ստեղծեն, որ ենթակայ անձնակազմը մարտի ժամանակ հրաժարի զէնքով գործելէ:

Փոխլրացնելով միմեանց գործողութիւնները, գործելով խումբի կազմին մէջ՝ վերջիններս 2020թ. Հոկտեմբեր 19-ին զօրամասի շտաբին մէջ ենթակայ երկու ստորաբաժանումներու հրամանատարներուն հրաման տուած են խուճապ տարածել զօրամասի զինուորներուն մէջ, որպէսզի մարտի ժամանակ զօրամասի զինուորները հրաժարին զէնքով գործելէ: Սակայն բարձրաստիճան սպաներու կամքէն անկախ հանգամանքներու մէջ այդ տեղի չէ ունեցած, քանի որ ենթակայ ստորաբաժանումներու հրամանատարները, հասկնալով տրուած հրամանին ապօրինի ըլլալը, այդ մասին ենթակայ զինուորներէն ոեւէ մէկուն չեն յայտնած:

ՀՀ ՊՆ «N» բանակային զօրաբաժնման հրամանատարի տեղակալի պաշտօնը զբաղեցուցած, կոչումով գնդապետ եւ «N» զօրամասի հրամանատարի տեղակալի պաշտօնը զբաղեցուցած, կոչումով փոխգնդապետ բարձրաստիճան սպաներուն մեղադրանք ներկայացուած է ՀՀ նախկին քրէական օրէնսգիրքի 35-380-րդ յօդուածի 2-րդ մասով (կը համապատասխանէ գործող ՀՀ քրէական օրէնսգիրքի 43-546-րդ յօդուածի 2-րդ մասին): Վերջիններուս նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանքը:

Յայտարարուած է նախաքննութեան աւարտ, վարոյթը մեղադրական եզրակացութեամբ ուղարկուած է հսկող դատախազին:

www.massispost.com

## ԼՈՒՐԵՐ

# Տրամաբանութիւն Չկայ Այն Պնդման Մէջ, Թէ ՀՀ Հակառուսական Գործիք Է. Ռուբինեան



Ազգային ժողովի փոխնախագահի՝ Ռուբէն Ռուբինեան

«Ընդհանրապէս տրամաբանութիւն չկայ այն պնդման մէջ, թէ Հայաստանը հակառուսական գործիք է, չկայ որեւէ փաստ դրա մասին վկայող եւ չի կարող լինել որեւէ արժանահաւատ վերլուծութիւն»:

Այս մասին Հանրային հեռուստաընկերութեան եթերով ըսած է ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ, Թուրքիոյ հետ բանակցութիւններուն ՀՀ ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեանը:

Ան նկատած է, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրեն միշտ դուրս դրած է աշխարհաքաղաքական բախումներէ, այդ եղած է ե՛ւ 2018-էն առաջ, ե՛ւ յետոյ: Հայաստանի Հանրապետութիւնը իր բոլոր դաշնակցային պարտաւորութիւնները միշտ կատարած է:

Ռուբինեան նաեւ ըսած է՝ սխալ պնդում է, թէ Հայաստանը ԵՄ դիտորդական առաքելութիւնը գերադասած է ՀԱՊԿ առաքելութենէն:

«ԵՄ դիտորդների ժամանելու վերաբերեալ որոշումը կայացուել է 2022-ի Հոկտեմբերին՝ Փրակում քառակողմ հանդիպման ժամանակ, եւ այդ պահի դրութեամբ ՀԱՊԿ խաղաղապահների թեմա գոյութիւն չունէր: Դրանից առաջ կարճաժամկէտ առաքելութիւն եկել եւ գնացել էր: Այսինքն՝ մեր առջեւ երբեք դրուած չի եղել ընտրութիւն՝ ընտրել ԵՄ, կամ ՀԱՊԿ դիտորդների: ՀԱՊԿ դիտորդների թեման բացուել է դրանից յետոյ, եւ ՀԱՊԿ առաքելութիւնը նոյնպէս չի մերժուել: Հայաստանը ՀԱՊԿ անդամ է, երբ տեղի է ունեցել Հայաստանի վրայ յարձակում, Հայաստանը արդարացիօրէն ակնկալել է 2 բան, որ պիտի հաստատուի, որ ՀՀ ինքնիշխան տարածքի վրայ յարձակում է տեղի ունեցել, երկրորդը՝ դա պիտի դատապարտուի, եւ լաւ կը լինէր, որ աջակցութիւն էլ լինէր. իմ նշած 3 կէտերից ոչ մէկը տեղի չի ունեցել», ընդգծած է ԱԺ փոխխօսնակը:

Անդրադառնալով այն պնդումներուն, թէ փրակեան հանդիպումը պէտք էր չեղարկել՝ Ռուբինեան արձագանգած է. «Փրակեան հանդիպման ընթացքում ի՞նչ է եղել, որ պէտք է չեղարկել: Այդ պնդումը անում է ընդդիմութիւնը, այդ պնդումը արել է նաեւ ՌԴ ԱԳՆ-ն, թէ իբր Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակումն արդիւնք է Փրակում տեղի ունեցած պայմանաւորուածութեան, եւ նոյնն էլ ասում է ընդդիմութիւնը: Փրակում այն բանից յետոյ, երբ Սեպտեմբերին տեղի էր ունեցել ՀՀ ինքնիշխան տարածքի վրայ ատրպէյճանական յարձակումը, որը չէր դատապարտուել անգամ ՀԱՊԿ-ի կողմից, դրանից յետոյ Հայաստանի վարչապետը եւ Ատրպէյճանի նախագահը Փրակում արել են ընդամէնը մէկ բան, որը նոր բան չէ, վերահաստատել են, որ կողմերը 1991 թուականի Ալմաաթայի հռչակագրի հիման վրայ ճանաչում են միմեանց տարածքային ամբողջականութիւնը»:

Ըստ Ռուբինեանի՝ 2022 թուականի Հոկտեմբերին վերահաստատուած է այն, ինչ տեղի ունեցած է 1991 թուականին, եւ անոր միացած եւ ստորագրած են ե՛ւ Ռուսաստանը, ե՛ւ Ատրպէյճանը, ե՛ւ Հայաստանը. «Հետեւաբար Հոկտեմբերին վերահաստատուած բանը, որը տեղի էր ունեցել 30 տարի առաջ, չէր կարող լինէր պատրուակ Նոյեմբերի 9-ի յայտարարութեան ամրագրուած պարտականութիւնների չկատարման համար»:

# Արայիկ Յարութիւնեան Կոչ Ըրած Է Սատարելու Արցախի Մէջ Ձեւաւորուող Նոր Իշխանութեան




Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը, որ հրաժարականի դիմում ներկայացուցած է Ազգային ժողով, Արցախի կառավարութեան անդամներուն եւ պետական կառավարման այլ մարմիններու, դատական համակարգի ղեկավար կազմին ներկայացուցած է նորանշանակ պետական նախարար Սամուէլ Շահրամանեանը: Այս մասին հաղորդագրութիւն տարածած է Արցախի նախագահի աշխատակազմը:

Երկրին ղեկավարը, շնորհակալութիւն հատնելով գործընկերներուն համատեղ աշխատանքի համար, ներկայացուցած է իր հրաժարականին դրդապատճառները:

Նշելով, որ մինչեւ Ազգային ժողովին կողմէ նոր նախագահի ընտրութիւնը շատ պատասխանատու ժամանակաշրջան է, Արայիկ Յարութիւնեանը շեշտած է, որ անոր յաղթահարումը եւ իրաւական ճանապարհով իշխանափոխութեան իրականացումը պետականութեան պահպանման համար կարեւոր նշանակութիւն ունին:

Արայիկ Յարութիւնեանը գործընկերներուն յորդորած է սթափօրէն գնահատել իրավիճակը եւ սատար կանգնիլ նոր ձեւաւորուող իշխանութեան՝ երկրին մէջ ստեղծուած մարդասիրական աղէտը յաղթահարելու, ներքին ու արտաքին հնարաւոր մարտահրաւէրները դիմակայելու հարցով:

Նախագահը շնորհակալութիւն յայտնած է նախկին պետական նախարար Գուրգէն Ներսիսեանին՝ երկրին համար բարդ ժամանակաընթացքին պետական կառավարման համակարգին մէջ պատասխանատուութիւն ստանձնելու համար, եւ Սամուէլ Շահրամանեանին՝ պատմական ծանր ժամանակաշրջանին պետական նախարարի պաշտօնը ստանձնելու առաջարկը ընդունելու համար:

# Իրանը Երբեք Պիտի Չընդունի Տարածաշրջանին Մէջ Աշխարհաքաղաքական Փոփոխութիւնները. Ապտըլ Լահիյանը՝ Ֆիտանին



Հըսէյն Ամիր Ապտըլ Լահիան

Իրանի արտաքին գործերու նախարար Հըսէյն Ամիր Ապտըլ Լահիանը Թեհրանի մէջ համատեղ մամուլի ասուլիս ունեցած է իր թուրք գործընկեր Հաքան Ֆիտանի հետ:

Մամուլի ասուլիսին ընթացքին իրանցի նախարարը ըսած է, որ «այսօրուան հանդիպման ընթացքին երկու երկիրներու պատուիրակութիւններուն միջեւ ծաւալած են մանրամասն, բայց արդիւնաւէտ քննարկումներ երկկողմ համագործակցութեան բոլոր առումներով»:

Խօսելով կովկասեան տարածաշրջանին մասին՝ Ապտըլ Լահիանը ըսած է, որ եկած է ժամանակը թողելու լարուածութեան եւ հակամարտութիւններու շրջանը եւ յառաջ շարժիլ դէպի Կովկասի մէջ խաղաղութեան եւ համագործակցութեան շրջան»:

«Մենք կ'աջակցինք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ պայմանաւորուածութիւններուն եւ երկխօսութիւններուն եւ երբեք պիտի չընդունինք տարածաշրջանին մէջ աշխարհաքաղաքական փոփոխութիւնները եւ տարածաշրջանին մէջ առկայ պատմական տարանցիկ ուղիներու սահմանափակումը», ըսած է ան:

# Պէտք Է Ըսեն՝ Ժողովուրդ, Այլընտրանք Չկայ.. Բաբայեանը Այլ Տարբերակ Կ'առաջարկէ



«Միասնական Հայրենիք» կուսակցութեան ղեկավար Սամուէլ Բաբայեան

ԼՂ «Միասնական Հայրենիք» խորհրդարանական կուսակցութեան ղեկավար Սամուէլ Բաբայեանը կը պնդէ՝ ճիշդ չեն տարածուող տեղեկութիւնները այն մասին, թէ ինքն ու իր ղեկավարած կուսակցութիւնը կողմ են ատրպէյճանական առաջարկին, որ Արցախ մարդասիրական բեռներ պէտք է մտնեն Աղտամէն:

«Ազատութեան» հետ զրոյցին Բաբայեան նշած է՝ իրենց դիրքորոշումը այն է, որ փաթեթային լուծման ծիրին մէջ Արցախ միաժամանակ բեռներ մտնեն ե՛ւ Լաչինի միջանցքով, ե՛ւ Աղտամով: Բացի այդ, փաթեթին մէջ, ըստ Բաբայեանի, պէտք է նաեւ անդրադարձ ըլլայ Արցախի կարգավիճակի հարցին, այսինքն՝ պէտք է հասկնալ՝ դէպի ո՞ւր կ'երթան: Հակառակ պարագային քանի մը փոխադրակառք բեռ անցընելով՝ խնդիրը պիտի չլուծուի:

«Պէտք է փաթեթային լուծում տանք էս խնդրին: Ասենք, ոչ թէ մենակ Աղտամով մի երկու օրից յետոյ մեքենայ բերենք, յետոյ փակենք նորից, նորից ասենք՝ Լաչինից 10 մեքենայ ենք բաց թողել, դա ձեւ չի լուծման: Մեր տեսակէտը այդ նիստում յստակ ձեւակերպել ենք՝ ընդհանուր փաթեթային լուծում պէտք է ստանալ՝ մենք ո՞ւր ենք գնում, ի՞նչ ենք անում, լաւ, 10 մեքենայ էլ բերեցիր, հաց կերար, յետո՞յ, երկրորդ քայլն ի՞նչ ես անում», ըսած է Բաբայեան:

Հարցումին, թէ փաթեթին մէջ պէտք է նաեւ Արցախի կարգավիճակին հետ կապուած հա՞րց ըլլայ, Բաբայեանը պատասխանած է. «Բոլորը, ի հարկէ, գոնէ ընդհանուր սկզբունքներ պէտք է ձեւակերպել»:

Ճշդող հարցումին, թէ ատրպէյճանական կողմը անոր պիտի համաձայնի՞, Բաբայեան պատասխանած է. «Ես համարում եմ, որ այո,, համաձայնուելու է»:

Բաբայեանը յառաջիկային այս հարցերուն շուրջ հանրութեան պիտի ներկայացնէ շուրջ 20 կէտէ բաղկացած իրենց մօտեցումները, որոնք դեռ մշակման փուլին են:

# 94 Տարեկանին Մահացած Է Ողիմպիական Ախոյեան Ալպերթ Ազարեանը

*Կեանքի 94-րդ տարուան մէջ կեանքէն հեռացած է հայ մարմնամարզիկ, ԽՍՀՄ մարմնամարզի վաստակաւոր վարպետ (1954), ՀԽՍՀ վաստակաւոր մարզիչ, ՀԽՍՀ մարմնակրթութեան եւ մարմնամարզի վաստակաւոր գործիչ Ալպերթ Ազարեանը:*

*Ան ՀՀ Ողիմպիական Կոմիտէի պատուաւոր նախագահն էր եւ ՀՀ մարմնամարզութեան ֆետերասիոնի նախագահը:*

*Մարմնամարզութեան միջազգային ֆետերասիոնի հաւաստագրման համաձայն՝ օղակներուն վրայ անոր կատարած վարժութիւններուն համալիրը պաշտօնապէս անուանակոչուած էր «Ազարեանական խաչ»:*



Ողիմպիական խաղերուախոյեան՝ Ալպերթ Ազարեան

*Ալպերթ Ազարեանը ծնած է 1929 թուականին Գանձակի մէջ, արհեստաւորի ընտանիքի մէջ: 1939 թուականին ընտանիքը տեղափոխուած է Վանաձոր, իսկ 1947 թուականին՝ Երեւան: 1946 թուականէն զբաղած է մարմնամարզով՝ ըմբշամարտով եւ ծանրամարտով:*

*Ալպերթ Ազարեանը յաղթած է 1956 եւ 1960 թուականներու Ողիմպիական խաղերուն: Ան արժանացած է նաեւ Աշխարհի (1954, 1958), Եւրոպայի (1955), Ասիական խաղերու (1963) ախոյեանի կոչման:*

*Մասնակցած է մրցումներու աշխարհի 49 երկրի մէջ, նուաճած է 45 ոսկեայ, 42 արծաթեայ եւ 10 պրոնզէ մետալներ: ԽԱՀՄ ախոյեանութիւններուն մէջ 11 անգամ արժանացած է ախոյեանի կոչման:*

*2022 թուականի Դեկտեմբեր 1-ին Երեւանի մէջ Ալպերթ Ազարեանի անուան մարմնամարզութեան ողիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի բակին մէջ բացուած է Ալպերթ Ազարեանի կիսանդրին:*

*1964 թուականին աւարտած է մարզական գործունէութիւնը՝ անցնելով աշխատանքի Երեւանի քաղաքային ժողովրդական կրթութեան վարչութեան ողիմպիական հերթափոխի մարմնամարզութեան մասնագիտացուած մարզադպրոցին մէջ որպէս տնօրէն: Անոր որդին՝ Էտուարտ Ազարեանը, նոյնպէս մարմնամարզիկ է, ողիմպիական ախոյեան:*

# Արտակ Բեգլարեանի Եւ Սերժ Թանքեանի Հետ «BBC»-ի Հարցազրոյցը Յարուցած Է Պաշտօնական Պաքուի Զայրոյթը




*Արցախի նախկին պետական նախարար Արտակ Բեգլարեանի եւ ամերիկահայ երաժիշտ Սերժ Թանքեանի հետ «BBC»-ի հարցազրոյցը յարուցած է պաշտօնական Պաքուի զայրոյթը:*

*««BBC»-ն կը զբաղի միակողմանի եւ կողմնակալ, յարձակողական շահարկումներով, սուտի տարածմամբ»,- X-ի (նախկին Թուիթըր) իր էջով գրած է Ատրպէյճանի նախագահի խօսնակ Հիքմեթ Հաճիեւը:*

*«BBC»-ի Context հաղորդման ընթացքին Բեգլարեանն ու Թանքեանը պատմած են Լաչինի միջանցքի արգելափակման, Ալիեւի վարչակազմի գործողութիւններուն հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին մասին:*

*Թանքեանը քննադատած է միջազգային հանրութիւնը՝ ռուսական ուժանիւթակիրները Ատրպէյճանի միջոցով ստանալու դիմաց Պաքուի գործողութիւններուն պատշաճ գնահատական չտալու, համարժէք գործողութիւններ չձեռնարկելու համար:*

*Ամերիկահայ երաժիշտը նաեւ Բրիտանիան մեղադրած է Պաքուի հետ ունեցած առեւտրային կապերու պատճառով լռելու համար:*

*Խօսքի ազատութեան առումով աշխարհի յետնապահներէն համարուող Ատրպէյճանի մէջ «BBC»-ի հաղորդումը, այդ շարքին՝ BBC-ի ատրպէյճանական ծառայութեան գործունէութիւնը քննադատած է նաեւ «Ատրպէյճանի մամուլի խորհուրդ» կազմակերպութիւնը:*

*Կառոյցին գնահատմամբ, այդ լրատուամիջոցը «ոչ-առարկայական նիւթեր եւ կանխակալ յայտարարութիւններ կ'ընէ»:*

*«Կա'մ այդ լրատուական-կառոյցը պէտք է ներողութիւն խնդրէ եւ յարգէ մեր երկրին տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը, կա'մ անոր գործունէութիւնը Ատրպէյճանի մէջ պէտք է դադրեցուի, հաւատարմագիրը չեղարկուի», կ'ըսուի ատրպէյճանցի լրագրողները միաւորող կազմակերպութեան յայտարարութեան մէջ:*

# Ատրպէյճանի Նպատակը Լեռնային Ղարաբաղը

Շարունակուած էջ 1-էն

*հետեւութիւններ կրնան ըլլալ»:*

*Պատասխանելով ռուս խաղաղապահներուն վերաբերեալ հարցումին, Հայաստանի վարչապետը նշեց, որ այնպէս է, որ Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ ուժերը չեն կատարեր եռակողմ յայտարարութեամբ իրենց ստանձնած առաքելութիւնը:*

*«Սա լուրջ մտահոգութեան առիթ է: Եւ, ըստ էութեան, Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահների ներկայութեան հիմնական նպատակներից մէկը հէնց քաղաքացիական հասարակութեան, քաղաքացիական բնակչութեան անվտանգութիւնն է: Տուեալ դէպքում անվտանգութիւնը, այդ թւում՝ ազատ տեղաշարժի իրաւունքը, չի ապահովւում, եւ դա խիստ մտահոգիչ փաստ է», յայտնեց Փաշինեան:*

*Պատասխանելով հարցումին, թէ ԼՂ վերահսկողութիւնը Ատրպէյճանին յանձնելը այն գինն է, որ պէտք է վճարուի խաղաղութեան համա՞ր, Հայաստանի վարչապետը ընդգծեց, որ այսօր Լեռնային Ղարաբաղի մէջ իրավիճակը կը վերահսկեն ԼՂ ընտրուած ներկայացուցիչները, եւ այնտեղ են նաեւ ռուս խաղաղապահները:*

*«Եթէ Հայաստանը եւ Ատրպէյճանը չճանչնան միմեանց տարածքային ամբողջականութիւնը Ալմաթիի հռչակագրի հիման վրայ, խաղաղութիւն երբեք պիտի չըլլայ»:*

*Լրագրողի հարցումին, թէ «ըստ Ձեզի, ի՞նչ երաշխիքներ կան, որ եթէ Լեռնային Ղարաբաղը անցնի Ատրպէյճանի վերահսկողութեան տակ, Ատրպէյճանը պիտի դադրեցնէ իր տարածքային պահանջները Հայաստանի Հանրապետութենէն», Նիկոլ Փաշինեան պատասխանեց. «Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը պէտք է ապահովուած լինեն եւ երաշխիքներ լինեն»:*

*«Ինչ վերաբերում է միւս՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնների ճանաչման հարցին, եթէ խաղաղութեան պայմանագիրն այդպիսի երաշխիքներ չունենայ իր մէջ, չստեղծի, այդ խաղաղութեան պայմանագիրը կը լինի անիմաստ», յայտնեց ան:*

*Պատասխանելով հայ-թրքական յարաբերութիւններուն վերաբերեալ հարցումին՝ վարչապետ Փաշինեան ընդգծեց. «Մենք չենք կապում եւ չենք ուզում կապել Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւնների հետ»:*

*Ընդգծելով, որ հայկական կողմը կարեւոր կը համարէ Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն կարգաւորումը՝ Նիկոլ Փաշինեան ըսաւ. «Դա շատ կարեւոր հարց է Հայաստանի համար, եւ Անգարա կատարած իմ վերջին այցելութեան եւ Թուրքիայի նախագահի հետ իմ ունեցած շփումների արդիւնքում ես տպաւորութիւն ունեմ, որ Թուրքիայի համար էլ շատ կարեւոր է Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորումը: Եւ կարծում եմ, որ այստեղ էլ կան հնարաւորութիւններ, ի հարկէ, կան նաեւ բարդութիւններ: Այդ բարդութիւնների մէջ է նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնների, ահա, այսպիսի որակը»:*

# Ֆրանսայի Տարածքային Իշխանութիւնները Մաքրոնին Կոչ Կ'ընեն ՄԱԿ-ին Մէջ Բանաձեւ Ներկայացնելու Լաչինի Միջանցքին Հարցով




*Ֆրանսայի տարածքային իշխանութիւնները յայտարարութեամբ հանդէս եկած են ի աջակցութիւն Արցախի հայերուն. անոնք նախագահ Էմանուէլ Մաքրոնին կոչ կ'ընեն սեղմ ժամկէտներու մէջ հանդէս գալու ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին մէջ բանաձեւ ներկայացնելու նախաձեռնութեամբ՝ պահանջելով Լաչինի միջանցքին անյապաղ եւ անվերապահ բացումը՝ մարդասիրական օգնութեան առաքումը եւ ապրանքներու ու մարդոց ազատ տեղաշարժը թոյլ տալու համար:*

*Յայտարարութիւնը, որ հրապարակած է Փարիզի քաղաքապետ Անն Իտալկօն X (նախկին Twitter) ընկերային ցանցին մէջ, շարունակութիւնն է մարդասիրական շարասիւնի միջոցով Արցախի ժողովուրդին հրատապ օգնութիւն հասցնելու նպատակով Իտալկոյի գլխաւորած պատուիրակութեան՝ Օգոստոս 29-31-ին Հայաստան եւ Լաչինի միջանցքի սկզբնամաս կատարած այցելութեան:*

*«Այս մտահոգիչ մարդասիրական իրավիճակէն զատ, պէտք է յարգուի 2020 թուականի վերջը ընդունուած համաձայնագրերով հաստատուած խաղաղութեան գործընթացը, ինչպէս նաեւ Արցախի հայերու ինքնորոշման իրաւունքի ճանաչումը, որ կը հանդիսանայ անոր գոյատեւման պարտադիր (sine qua non) պայման, այս իրավիճակին մէջ, երբ Ատրպէյճանը կը փորձէ թաքցնել իր ցեղասպան նկրտումները», ըսուած է յայտարարութեան մէջ:*

# Ինչո՞ւ Է Ձախողուել Ուկրաինական Կտրուկ Հակայարձակումը Ի՞նչ Սպասել

ԳՈՌ ՄԱԴՈՅԵԱՆ

Այլեւս կարելի է փաստել, որ Ուկրաինայի Զու հակայարձակումը ձախողուել է, եթէ այն դիտարկելու լինենք արագ ճեղքմամբ Մարիուպոլ դուրս գալու ու ռուսական »հարաւ« խմբաւորումը Ղրիմից կտրելու ռազմավարութեան նպատակով:

Ուկրաինական Զու հակայարձակումը, որի մասին ամիսներ շարունակ խօսւում էր, չի կարողանում արագ յաղթանակ կամ շօշափելի ռազմական յաջողութիւններ բերել ուկրաինական բանակին: Սպասուող բեկման փոխարէն Ուկրաինայի Զու-ն կռւում է Զապորոժիեի եւ Դոնեցկի շրջաններում իւրաքանչիւր կիլօմետրի վրայ եւ պաշտպանւում Լուգանսկի մարզում, որտեղ ռուսական բանակը նոյնիսկ այս վիճակում փորձում է հակայարձակուել՝ զգալիօրէն առանց յաջողութեան:

Վերջին շաբաթների ընթացքում հրապարակուել են բազմաթիւ վերլուծական յօդուածներ, որոնց հեղինակները փորձում են հասկանալ, թէ ինչ է կատարւում ռուս-ուկրաինական ռազմաճակատում, վերլուծել հակայարձակման դանդաղման կամ ձախողման պատճառներն ու ռազմա-քաղաքական հնարաւոր հետեւանքները նախ եւ առաջ Ուկրաինայի համար:

Ուկրաինական հակայարձակման դանդաղման կամ ձախողման պատճառների թւում փորձագէտները նշում են ռուսական բանակի լաւ պատրաստուած, եռագիծ պաշտպանութիւնը, ուկրաինական զօրքերի ոչ բաւարար պատրաստուածութիւնը, Ուկրաինայի Զու որոշակի զինատեսակների բացակայութիւնը, օդուժի թուլութիւնը, ինչպէս նաեւ բանակների անհամադրելի չափերը. այսինքն, Ուկրաինայի Զու եռակի թուային գերակայութեան բացակայութիւնը՝ որպէս յարձակուող կողմ:

Ուկրաինայի Զու հակայարձակման փուլերը

Ա. առաջին փուլում Ուկրաինայի Զու-ն ռուսական պաշտպանութիւնը ճեղքելու համար փորձել է լայնօրէն կիրառել զրահատեխնիկայ, սակայն հանդիպել է յամառ դիմադրութեան, եւ ճեղքումն աւելի դժուար է դարձել բազմաթիւ ականապատ դաշտերի, ուղղաթիռների եւ հրետանու կիրառման հետեւանքով: Որպէս արդիւնք, ռուսական պաշտպանական գծի արագ ճեղքում չի ստացուել:

Բ. երկրորդ փուլում Ուկրաինան փոխեց իր մարտավարութիւնը՝ կենտրոնանալով հրետանու վրայ եւ սկսելով մաշեցնել ռուսական ստորաբաժանումները: Այս մարտավարութիւնը հնարաւոր դարձաւ ուկրաինական հրետանու՝ աւելի մեծ հեռահարութեան եւ հրետանային գերճշգրիտ ռադարների՝ աւելի մեծ քանակի ու որակի շնորհիւ:

Գ. երրորդ փուլում ուկրաինացիները կրկին ակտիւացրել են յարձակողական գործողութիւնները: Առայժմ այս ակտիւացումը ճակատի բեկման չի բերել: Չնայած ուժեղացուած գրոհին, ուկրաինական ռեզերւների գործարկմանը՝ վճռական բեկում եւ ռուսական ճակատի ճեղքում այդպէս էլ չի եղել:

Որոնք են Ուկրաինայի Զու ուժեղ եւ թոյլ կողմերը

Թոյլ կողմեր

Ա. այն, որ յարձակումը, ամենայն հաւանականութեամբ, տեղի կունենայ Զապորոժիեի շրջանում՝ դէպի Ազովի ծովի ափ, քննարկուել է դեռ ձմռանը: Այս նպատակն այնքան պարզ էր, որ շատերը կարծում էին, որ արդիւնքում հարուածը կհասցվի Ռուսաստանի համար անսպասելի այլ վայրում: Յաջողութեան դէպքում Ուկրաինայի Զու-ն կը կարողանայ երկու մասի բաժանել ՌԴ Զու խմբաւորումը՝ բարդացնելով ռուսական զօրքերի դիրքերը Դնեպրի ձախ ափին՝ Խերսոնի մարզում, եւ, հաւանաբար, ստիպելով նրանց նահանջել Ղրիմ: 2022թ. դեկտեմբերին, Ռուսաստանն արդէն ակտիւօրէն ամրութիւններ էր կառուցում Զապորոժիեի շրջանում:

Բ. ժամանակի ու վերապատրաստման պակասը: Ուկրաինան կարող է համակցուած սպառազինութեան յարձակման գործողութիւններ իրականացնել վաշտի մակարդակով, բայց այն սկսում է քանդուել, երբ փորձում են հասնել գումարտակի մակարդակի: Մարտական համակարգման աշխատանքներն իրականացւում են առաւելագոյնը գումարտակի մակարդակով, եւ Ուկրաինայի Զու վերապատրաստումը արեւմտեան զօրակայաններում տեւում է ընդամէնը հինգ շաբաթ՝ ներառեալ անհատական պատրաստութիւնը, ինչն ակնյայտօրէն բաւարար չէ յարձակման լիարժէք պատրաստութեան համար:

Գ. ավիացիայի սուր պակաս: Չնայած այն հանգամանքին, որ Ուկրաինան դեռեւս ունի մարտական ինքնաթիռներ, դժուար է սա անուանել լայնածաւալ աւիացիոն աջակցութիւն: Ուկրաինայի Զու ուղղաթիռների եւ ինքնաթիռների բացակայութեան պատճառով ռուսական զօրքերը կարողացել են յաջողութեամբ կիրառել գրոհային ուղղաթիռներ, որոնք կարող են խոցել ուկրաինական զրահատեխնիկան եւ հակաօդային համակարգերը:

Ուժեղ կողմերը

Ա. ինչպէս նշում են շատ ռուսամէտ ռազմական բլոգերներ եւ փորձագէտներ, Ուկրաինայի զինուած ուժերը աւելի լաւ են յագեցած թուային ռադիօկայաններով եւ այլ համակարգերով, որոնք մեծացնում են տեղեկացվածութիւնը եւ զգալիօրէն արագացնում որոշումների կայացման գործընթացը զօրքերում:

Բ. ուկրաինայի զինուած ուժերի մէկ այլ տեխնիկական առաւելութիւնը հրետանային ռադարներն են, որոնք ուկրաինացիներին թոյլ են տալիս աւելի յաջող վարել հակամարտկոցային մարտեր:

Գ. յարձակման ժամանակ դրսեւորվել է ինժեներական տեխնիկայի անբաւարար քանակի խնդիրը, որը միշտ մեծ կորուստներ է կրում ինժեներական աշխատանքների ժամանակ՝ ականապատ դաշտեր եւ խոչընդոտներ յաղթահարելիս:

Դ. ուկրաինայի Զու առավելութիւններից մէկը, որի մասին շատ է խօսւում վերջին ամիսներին, արեւմտեան զէնքն ու ռազմական տեխնիկան է: Սակայն այս առաւելութիւնը որոշակի առումով նաեւ թուլութիւն է: Փաստն այն է, որ անձնակազմի կողմից տեխնոլոգիաների կիրառումը ժամանակ է պահանջում: Ցանկացած

Շար.ը էջ 14



# Massis Weekly

Volume 43, No. 33 Saturday, September 9, 2023



## Nikol Pashinyan: Armenia's Policy of Solely Relying on Russia to Guarantee Its Security Was a Strategic Mistake
## Azerbaijan's Goal Is to Depopulate Nagorno Karabakh



YEREVAN -- Armenia's prime minister Nikol Pashinyan has said his country's policy of solely relying on Russia to guarantee its security was a strategic mistake because Moscow has been unable to deliver and is in the process of winding down its role in the wider region.

Մեր քննարկումներուն առանցքը պիտի հանդիսանան հայ դպրոցները, լրատուամիջոցները, ծնողները եւ արդիականացած բառարանները, որոնք միասին կը կազմեն սերունդները իրարու կամրջող ու արեւմտահայերէնի պահպանումը երաշխաւորող ներդաշնակ համոյթ մը:

## Դպրոցներու դերը արեւմտահայերէնի պահպանման առաքելութեան մէջ

Լեզուի պահպանման բարդ գործընթացին մէջ կրթական հաստատութիւնները ունին առանցքային դերակատարութիւն, իսկ արեւմտահայերէնի ուսուցման նուիրուած դպրոցները՝ սկզբունքով մեր բոլոր հայկական վարժարանները, մեծ ազդեցութիւն ունին երիտասարդութեան վրայ. հոն է որ հայօրէն կը թրծուի հայ երիտասարդը, այդպէս կը սպասուի: Որպէս լեզուական ժառանգութեան պահապաններ՝ այս դպրոցները կը կրեն ոչ միայն լեզուական հմտութիւններ փոխանցելու, այլեւ մշակոյթի եւ ինքնութեան հետ խոր կապ ստեղծելու պատասխանատուութիւնը:

Անառարկելի է կրթական հաստատութիւններու կարեւոր դերը արեւմտահայերէնի պահպանման առաքելութեան մէջ: Այժմ փորձենք քննարկել, թէ ի՞նչ ռազմավարութիւններ կրնան որդեգրուիլ՝ ապահովելու լեզուին կենսունակութիւնը: Արեւմտահայերէնը ապրելակերպի վերածող լեզուական ծրագիրներէն մինչեւ լեզուին համարկումը ընթացիկ ուսումնական ծրագիրներուն եւ հմուտ ուսուցիչներու պատրաստութենէն մինչեւ մշակութային արտադասարանական միջոցառումներու կազմակերպումը՝ հայ դպրոցները կը մնան կանգնած իբրեւ փարոսներ, որոնք կը լուսաւորեն արեւմտահայերէնի պահպանման ուղին: Կրթութեան միջոցով է, որ այս լեզուին մնայուն աւանդը եւ անոր ընդգրկած կենսունակ մշակոյթը կրնան փոխանցուիլ գալիք սերունդներուն:

Շատ մը դպրոցներ սկսած են անտարբեր մօտեցում ցուցաբերել հայերէնով դասաւանդուած նիւթերուն նկատմամբ, թէեւ հակառակը կը փորձեն ցոյց տալ՝ առարկելով, որ անոնք կը ճնշեն ուսումնական ընթացիկ ծրագրին եւ իմա պետական քննութիւններու յաջողութեան վրայ: Պատրուակէն աւելի՝ մեծ սուտ մը կարելի է նկատել այս մէկը: Առաջ ալ մեր դպրոցները միշտ հետամուտ եղած են պետական քննութիւններու յաջողութեան եւ միշտ ալ շատ լաւ արդիւնքներ արձանագրած են՝ առանց ոչ մէկ գիջում կատարելու հայերէնի նիւթերէն: Այսօր կեանքի մէջ յաջողած տարեց սերունդներ կան, որոնք բժիշկ են, երկրչափ ու առեւտրական, որոնք ոչ միայն օտար լեզուներու կողքին կը խօսին սահուն արեւմտահայերէն, այլեւ գեղարուեստական մակարդակով ու անսխալ կը գրեն զայն: Այդպէս էր, որովհետեւ հայկական դպրոցները հայերէնը կը նկատէին աշակերտներու կրթութեան եւ մշակութային ինքնութեան վառ եւ իմաստալից մէկ մասը՝ պետական քննութիւններու մէջ յաջողութեան կողքին: Փաստօրէն, հայերէնին յատկացուցած ժամանակն ու ճիգը արգելք չէր ըլլար որ անոնք իրենց պետական ծրագիրը իրագործէին: Այսօր ալ կան նման դպրոցներ, օրինակ Համազգայինի ճեմարանը, որ ոչ մէկ գիջում կը կատարէ հայերէնի իր ծրագիրէն, միւս կողմէ ընդհանրապէս 100% յաջողութիւն կ՛արձանագրէ պետական քննութեանց մէջ: Հայերէնը երբե՛ք արգելք չէ պետական ծրագիրին: Միայն ծուլութեան, անտարբերութեան եւ հաւանաբար առեւտրական նկատառումներով է (պիտի ճշէի յամեցող դժուարութիւններ) որ հայերէնը սկսած է երկրորդական, երրորդական նկատուիլ մեր դպրոցներուն մէջ: Ծնողները անշուշտ մեծ դեր ունին այս վիճակի ստեղծման մէջ: Կ՛անդրադառնանք քիչ ետք:

## Անկրկնելի է հայ ուսուցիչին դերը

Հայերէն նիւթեր դասաւանդող ուսուցիչներու վերորակաւորումը դարձած է կենսական: Անհրաժեշտ է ներդրումներ (օժանդակողներ միշտ կը գտնուին) կատարել արեւմտահայերէնին տիրապետող ուսուցիչներու վերապատրաստութեան համար: Լաւ պատրաստուած մանկավարժները կարեւոր են լեզուական հմտութիւնները արդիւնաւէտ փոխանցելու համար: Գիտութեան կողքին հայերէնի հանդէպ կիրք ունենալն ու փոխանցելը պայման է: Անոնք նաեւ կրնան, պէտք է ծառայեն որպէս մշակութային դեսպաններ՝ օգնելով ուսանողներուն գնահատելու լեզուին պատմամշակութային խորքը: Հոս կրնանք փակագիծ մը բանալ եւ նշել անունները, երկար շարք մը, հայ ուսուցիչներու, որոնք գիտութեան կողքին՝ ոգի ու մշակութային գիտակցութիւն ջամբեցին իրենց աշակերտներուն: Այդ օրերուն ալ պետական քննութիւններ կային եւ հայ աշակերտները մեծ յաջողութիւններ կ՛արձանագրէին:

## Մշակոյթի եւ լեզուի ակումբներ

Դպրոցները կրնան ստեղծել մշակութային ակումբներ, սեմինարներ եւ ձեռնարկներ, որոնք ազգային մեծ տօներուն կողքին կը նշեն արեւմտահայ սովորութիւնները, տօները եւ աւանդութիւնները: Այս միջոցառումները ո՛չ միայն կը խորացնեն լեզուի եւ մշակոյթի միջեւ կապը, այլեւ հնարաւորութիւն կու տան աշակերտներուն ստեղծելու լեզուական խմբակներ կամ ուսումնական խումբեր: Այս արտադասարանական ակումբները կրնան կեդրոնանալ արեւմտահայերէնի հմտութիւններու կատարելագործման եւ մշակութային քննարկումներու վրայ՝ լեզուն աւելի գրաւիչ եւ բովանդակալից դարձնելու առաջադրանքով: Նոր գիւտ մը չէ այս մեր առաջարկը: Կար ժամանակ, ոչ հեռու անցեալին, երբ ատենամարզանքի պահերը կ՛օգտագործուէին այս նպատակով: Ակումբներու առաջարկն ալ նոր չէ. բազմաթիւ դպրոցներ որդեգրած էին այս դրութիւնը, եւ նոյնիսկ արեւմտահայերէնով նշանաւոր պարբերականներ լոյս տեսած են այդ ակումբներուն ճամբով: Ժամանակի սղութիւնը պատրուակ է եւ ծուլութիւն: Գործ մը պակաս:

Եթէ կայ կամքը եւ մանաւանդ պատմական պարտաւորութեան գիտակցութիւնը, դպրոցներու միջոցով արեւմտահայերէնը կը դառնայ աւելին, քան պարզ բառ ու ձայն. ան կը վերածուի ապրելակերպի:

## Արդի լրատուամիջոցները ի սպաս արեւմտահայերէնին

Արեւմտահայերէնը՝ հայ մշակոյթի եւ ժառանգութեան փարոսը, կը դիմագրաւէ նաեւ արագ զարգացող աշխարհի մարտահրաւէրները, որոնք կրնան վերածուիլ բարիքի, եթէ կարենանք զանոնք լաւապէս օգտագործել: Այս առումով առանցքային է դերը արդի լրատուամիջոցներուն, որոնք ընդհանրապէս կրնան շունչ տալ ու կենսաւորել անհետացման եզրին գտնուող լեզուներ՝ իրարու կապելով սերունդները եւ երաշխաւորելով անոնց կենսունակութիւնը: Լրատուամիջոցները կրնան պաշտպանել նաեւ արեւմտահայերէնը եւ զայն դարձնել այժմէական՝ այսօրուան եւ վաղուան համար:

**Թուայնացած հրատարակութիւններ.** Ստեղծել եւ օժանդակել առցանց թերթերու, ամսագրերու եւ արեւմտահայերէնով պլոկներու: Այս հարթակները կը տարածեն լուրեր, պատմութիւններ, յօդուածներ եւ տեսակէտներ՝ ստեղծելով արեւմտահայերէն խօսողներու առցանց հաւաքականութիւն մը՝ յատկապէս ներգրաւելով երիտասարդութիւնը, որ աւելի վարժ է թուայնացած միջոցներու

Շար.ը էջ 12

## Վերամուտի Առիթով - Ի Խնդիր Հայ Դպրոցին

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Հայկական Ցեղասպանութենէն գրեթէ անմիջապէս ետք՝ Թուրքի եաթաղանէն մազապուրծ ազատած հայ «Մնացորդացը» իր բնակած նորանոր գաղութներուն մէջ հայկական ամէնօրեայ վարժարաններ հիմնեց: Տարագիր հայութիւնը մէկ կողմէ՝ իր նիւթական, տնտեսական ու քաղաքական ծանրակշիռ պայմանները ջանաց յաղթահարել, միւս կողմէ՝ աստիճանաբար կարգադրեց կրթական գործը՝ նորանոր դպրոցներու ցանցով մը:

Սկզբնական շրջանի հայ գաղթականներուն կողմէ տախտակաշէն դպրոցաշէնքերը՝ յետագայ տարիներուն վերածուեցան բաղդատաբար աւելի արդի եւ հրապուրիչ կրթական յարկերու, որոնց կողքին հետզհետէ հիմնուեցան նաեւ ուսման նոր հայ հաստատութիւններ:

Իրերայաջորդ դպրոցական բազմաթիւ սերունդներ թրծուեցան հայ վարժարաններու շունչով, հայ մշակոյթի սէրով: Այդ դպրոցները հաղորդակից դարձուցին իրենց վստահուած հայ աշակերտութիւնը՝ հայ ժողովուրդի անցեալ պատմութեան, անոր յոյսերուն եւ յուսախաբութեանց, անոր նուաճումներուն եւ ձախորդութեանց, անոր իտէալներուն եւ երազներուն, անոր փառքին ու տառապանքին:

Ժամանակի թաւալումին հետ, սակայն, հետզհետէ մեր երբեմնի հայաշատ գաղութներու մէջ սկսան փակուիլ հայ դպրոցներ: Միայն անցնող քանի մը տասնամեակներու ընթացքին աւելի քան 70 ամէնօրեայ հայկական դպրոցներ փակուեցան...

Անցեալին՝ հակառակ Սփիւռքահայութեան տնտեսական համեստ (նոյնիսկ աննպաստ) պայմաններուն, հայ դպրոցը յաջողեցաւ շնորհիւ անցնող սերունդներու անսպառ զոհողութեան, հոգածութեան եւ հուժկու ջանքերուն: Ինչո՞ւ ներկայիս տարբեր ըլլայ պարագան, մանաւանդ երբ տնտեսական պայմանները շատ աւելի նպաստաւոր են մեր գաղութներու մեծամասնութեան համար: Ինչ պատճառներ կամ պատճառաբանութիւններ ալ մէջտեղ նետուին՝ արդարանալի չեն, որովհետեւ հայ դպրոցին դերը անփոխարինելի է: Անվիճելի իրողութիւն մը որ հայ դպրոցը ամէնէն ազդու միջոցներէն մէկն է մեր մնայուն արժէքներու ժառանգութիւնը կտակելու նոր սերունդին եւ հայրենահեռու գաղութներու մէջ մեր Հայրենիքի եւ Մայրենիքի (մայրենի լեզուին) սիրոյ կրակը վառ պահելու հայ սրտերուն մէջ:

Հայ Դպրոցը կոչուած է Մարդակերտութեան եւ Հայակերտութեան վսեմ գործին: Անոր նպատակն է հայ տղաքն ու աղջիկները կեանքի պատրաստել, անոնց նկարագիրը կերտել, անոնց բանական եւ հոգեկան աշխարհը ձեւակերպել: Ասոր առընթեր՝ հայ դպրոցը յատուկ կարեւորութիւն կ՛ընծայէ Հայեցի Դաստիարակութեան:

Հայեցի Դաստիարակութեան հիմը կը կայանայ հայերէն լեզուի ուսուցման եւ մայրենի լեզուով հայ ոգիի եւ ոգեկանութեան մէջ: Հայաստանի եւ Արցախի հայրենի մեր հողերուն վրայ հայեցի դաստիարակութիւնը լռելեան ընդունուած իրողութիւն մըն է: Բայց Սփիւռքի մէջ առաւելաբար հայ դպրոցին առաքելութիւնը հայակրթութիւնն է, որովհետեւ հայ տղան եւ հայ աղջիկը հ՛այ պիտի կրթուին: Անոնք կրնան աշակերտել որեւէ դպրոցական յարկի ներքեւ, բայց միայն հայ դպրոցին մէջ է, որ հայեցի դաստիարակութիւնը պիտի դառնայ մայրենի լեզուով եւ անով է որ պիտի փոխնացուի հայ ոգին սերունդէ սերունդ:

Անուրանալի է հայ դպրոցին դերը նոր սերունդներուն փոխանցած իր շունչով եւ ընծայած հայեցի մթնոլորտով, որոնց հետ միասին հայ զաւակներ կ՛առաջնորդուին ինքնաճանաչման, ինչպէս նաեւ հայ ժողովուրդին անցեալի ու ներկայի կեանքին:

Հայ տղան ու աղջիկը իր ամէնօրեայ կաթին ու հացին չափ պէտք ունի հայ դպրոցի ոգեղէն սնունդին, առանց որու անոնց ազգային դիմագիծը հետզհետէ կը տժգունի, կը խամրի ու կը չորնայ:

Իրերու եւ իրողութեան այս լոյսին տակ՝ Սփիւռքահայութեան համար անհրաժեշտ են տեսիլք, աննկուն կամք եւ նիւթական զոհողութիւն: Ասոնցմով է որ հայ դպրոցը պիտի մնայ կանգուն եւ պիտի կրնայ կատարել իր առաքելութիւնը: Անհրաժեշտ է, որ հայ մարդը համոզուի հայ դպրոցի կենսական դերակատարութեան եւ նպաստին՝ հայապահպանումի նկատմամբ: Եւ որովհետեւ բարեհաճ իղձերով տեղ մը կարելի չէ հասնիլ, անհրաժեշտ է նաեւ հայ դպրոցը տնտեսապէս ինքնաբաւ դարձնել, որպէս զի ան ալ, իր կարգին, ընտիր նկարագրի եւ հայեցի դաստիարակութեան համար հարկ եղած որակաւոր հայ ուսուցիչներ վարձէ, ազդու ուսումնական դասածրագիրներ եւ կրթական ու հայեցի մթնոլորտ ստեղծէ՝ ի խնդիր հայութեան ապագան եղող նոր սերունդներուն:

Բաց ենք, եւ դարձեալ կը կրկնենք, եթէ հայ մարդիկ իրենց բարօրութեան եւ հաճոյքի պահանջներուն համար մեծ գումարներ կրնան ծախսել, արդար չէ՞, որ հայ մշակոյթի եւ իրենց ազգային ինքնութեան պահպանման սատարող Հայ Դպրոցին նեցուկ կենան ոչ միայն բարոյապէս, այլ մանաւանդ նիւթապէս:

---

## Պահպանե՛նք, Զարգացնե՛նք

Շարունակուած էջ 11-էն

օգտագործման:

**Ձայնասփիւռը, թուայնացած ձայնային հաղորդումները (podcasts) եւ ընկերային ցանցերը.** Ստեղծել արեւմտահայերէն ռատիոկայաններ եւ podcast-ներ՝ օգտագործելով ձայնի հզօրութիւնը լեզուական ուսուցման համար: Երիտասարդներուն ուղղուած յայտագրերը կրնան լեզուի ուսուցումը դարձնել զուարճալի եւ տեղին: Նաեւ օգտագործել ընկերային ցանցերու հարթակները, ինչպէս՝ YouTube-ը, Instagram-ը եւ TikTok-ը՝ միացնելու աշխարհով մէկ արեւմտահայերէն խօսողները, լեզուի դասընթացքներ կազմակերպելու, մշակութային արժէքներ փոխանցելու համար՝ միաժամանակ խթանելով մէկ հաւաքականութեան պատկանելու զօրաւոր զգացում մը: Թուայնացման այս դարաշրջանին, լրատուամիջոցները անփոխարինելի դաշնակից են արեւմտահայերէնի պաշտպանութեան եւ զարգացման՝ կամրջելով սերունդները իրարու եւ ենթահող պատրաստելով ապագայի զարգացման:

Այլ խօսքով՝ լրատուամիջոցները արեւմտահայերէնը կը փոխադրեն թուայնացումի դարաշրջան: Թուայնացած հրատարակութիւնները կը ստեղծեն արեւմտահայերէն խօսողներու առցանց համայնքներ: Ձայնասփիւռը եւ podcast-ները ճիշդ հնչիւններ եւ արտայայտութեան եղանակներ կը հաղորդեն՝ լեզուի ուսուցումը դարձնելով զուարճալի եւ անմիջական: Ընկերային ցանցերու հարթակները կը խթանեն կապերը ամբողջ աշխարհի տարածքին արեւմտահայերէն խօսողներու միջեւ՝ ստեղծելով համաշխարհային հաւաքականութիւն մը՝ միժամանակ տրամադրելով միջոցները լեզուի ուսուցման եւ մշակութային արժէքներու սատարման:

### Ծնողները վճռորոշ դեր ունին

Ծնողները վճռորոշ դեր կը խաղան դպրոցներու եւ լրատուամիջոցներու կողքին արեւմտահայերէնի պահպանման առաքելութեան մէջ: Խորքին մէջ անոնց դերը կը նկատուի հիմքը լեզուի պահպանման ջանքերուն: Ծնողները պարտին ըլլալ առաջին ուսուցիչները երեխայի կեանքին մէջ, առաջին փոխանցողը մշակութային եւ լեզուական ժառանգութեան: Տան մէջ արեւմտահայերէնի քաջալերանքը կ՛երաշխաւորէ աշակերտներուն սէրը լեզուին նկատմամբ: Ծնողները իրենք է որ իրենց զաւակներուն պիտի ծանօթացնեն հայկական սովորութիւնները, աւանդոյթներն ու արժէքները՝ ամրապնդելով լեզուի մշակութային նշանակութիւնը: Լեզուի եւ մշակոյթի այս կապը կենսական նշանակութիւն ունի լեզուի պահպանման համար: Արեւմտահայերէնի նկատմամբ խանդավառութիւն ցուցաբերող ծնողները կրնան իրենց զաւակներուն մէջ լեզուին հանդէպ դրական վերաբերմունք սերմանել:

Ըստ էութեան, ծնողները կը հանդիսանան լեզուի եւ մշակոյթի պահակները ընտանիքին մէջ: Անոնց աշխուժ նուիրուածութիւնը արեւմտահայերէնի տարածման գործին կ՛երաշխաւորէ, որ լեզուն պարզապէս դպրոցական պարտականութիւն չըլլայ, այլ ընտանիքի առօրեայ կեանքին կենդանի, շնչառական մէկ մասը:

### Ժամանակակից բառարաններու անհրաժեշտութիւնը

Հայերէնէ օտար լեզուներու բառարանները կարեւոր են լեզու սորվողներու եւ ընդհանրապէս հաղորդակցութեան համար: Սակայն, մեր բառարանները, ընդհանրապէս հին հրատարակութիւններ են եւ չունին հոմանիշներ ու ժամանակակից համապատասխան արտայայտութիւններ: Լեզուն բնականաբար զարգացող վիճակ է եւ երբեմն անհրաժեշտ կը դարձնէ ստեղծագործական յարմարեցումները, մանաւանդ երբ ժամանակակից բառերը չունին իրենց հայերէն համարժէքները: Անծանօթ եզրերու ցանկագրումը իւրաքանչիւրիս կողմէ ինքնին անգնահատելի աշատանք է լեզուի զարգացման համար:

Անհրաժեշտ է որ լեզուի ջատագովները եւ կազմակերպութիւններ համատեղ ճիգ թափեն հայերէն բառարաններու վերաթարմացման եւ մասնաւորաբար արդի եզրերու ընդգրկման առաջադրանքով: Յաճախ, պարզ օրինակի համար, կ՛անճրկինք «business» կամ «resource» բառերուն հայերէն հոմանիշ գտնելու, դեռ առանց խօսելու այն անհատնում նոր եզրերուն մասին, որոնք յառաջցած են գիտութեան եւ արհեստագիտութեան զարգացումով, առօրեայ կեանքի թուայնացումով: Ճիշդ է, մենք լեզուի ակադեմիա չունինք, բայց տեղէ մը պէտք է սկսիլ:

Արդիականացած բառարանները անցեալը կը կապեն ներկայի պահանջներուն: Անոնք կ՛օգնեն հասկնալու եւ օգտագործելու ժամանակակից արեւմտահայերէնը, որ ժամանակի ընթացքին կը զարգանայ:

Արեւմտահայերէն բառարաններու արդիականացման համար անհրաժեշտ կը նկատուի թուայնացած միջոցներու, ինչպէս՝ կայքէջերու, յաւելումներու (apps) եւ առցանց այլ հարթակներու օգտագործումը: Այս միջոցները ոչ միայն կը դիւրացնեն լեզուական աղբիւրներու աւելի լայն հասանելիութիւնը, այլեւ թոյլ կու տան շարունակական թարմացումներ կատարել՝ քայլ պահելով լեզուական ընդհանուր փոփոխութիւններուն հետ: Թուայնացած հարթակներու օգտագործումով կարելի է արագօրէն որոնել ու գտնել եզրեր, ծանօթանալ հնչիւններուն եւ ուսումնասիրել անոնց օգտագործման եղանակը՝ լեզուն աւելի մատչելի եւ յարմարող դարձնելով ժամանակակից պահանջներուն: Աւելին, արեւմտահայերէնի ջատագովներուն եւ կազմակերպութիւններու միջեւ թուայնացած համագործակցութիւնը կը խթանէ լեզուն հարստացնելու եւ պահպանելու հաւաքական ճիգերը՝ երաշխաւորելով անոր արդիականութիւնն ու կենսունակութիւնը թուայնացման այս դարաշրջանին:

Եզրակացնելով, դպրոցները, լրատուամիջոցները, ծնողները եւ արդիականացած բառարանները միասին կը կազմեն սերունդները կամրջող եւ արեւմտահայերէնի պահպանումը երաշխաւորող ամբողջութիւն մը: Անոնք կը տրամադրեն միջոցները եւ լեզուական աղբիւրները արեւմտահայերէնը ծաղկեցնելու երիտասարդութեան սիրտերուն եւ հայկական սփիւռքի հաւաքական գիտակցութեան մէջ: Իբրեւ լեզուական ժառանգութեան ջահակիրներ՝ անոնք իրենց կարգին կրնան լուսաւորել արեւմտահայերէնի դէպի կենսունակ եւ յարատեւող ապագայ առաջնորդող ուղին:

«ՏԱՐԲԵՐԱԿ21»

# Կոմիտասի Անուան Պանթէոնին Մէջ Տեղադրուած Է Բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինեանի Գողցուած Կիսանդրին



ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան Նախարարութեան պատուէրով եւ ֆինանսական միջոցներով պատրաստուած եւ Կոմիտասի անուան պանթէոնին մէջ տեղադրուած է բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինեանի կիսանդրին: Պատմութեան եւ մշակոյթի անշարժ յուշարձան հանդիսացող կիսանդրին գողցուած էր:

Աշխատանքներու իրականացման համար սահմանուած կարգով յայտարարուած էր մրցոյթ. յաղթող քանդակագործը Սարգիս Պաղտասարեանի որդին է՝ քանդակագործ Աշոտ Պաղտասարեանը:

ՀՀ ԿԳՄՄ նախարար Ժաննա Անդրէասեանն ու նախարարի տեղակալ Ալֆրետ Քոչարեանը այցելած են Կոմիտասի անուան պանթէոն եւ ծաղիկներ խոնարհած՝ Շուշանիկ Կուրղինեանի յուշարձանին:

Նախարարին խօսքով՝ երկար ճանապարհ անցնելէ յետոյ վերջապէս հնարաւոր եղաւ Շուշանիկ Կուրղինեանի արձանը վերադարձնել իր տեղը.

«2021 թուականին Կոմիտասի անուան զբօսայգու տարածքից գողացուել էր անուանի քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Պաղտասարեանի քանդակած Շուշանիկ Կուրղինեանի կիսանդրին: Նոր տեղադրուած կիսանդրու հեղինակ՝ քանդակագործ Աշոտ Պաղտասարեանի տեղեկացմամբ՝ այս քանդակը պատրաստուել է ոչ թէ լուսանկարների, այլ նախկին քանդակի հիման վրայ: Խորհրդանշական է, որ քանդակն իր տեղն է վերադարձւում ինչպիսին, որ ի սկզբանէ կար: Այսօր՝ Շուշանիկ Կուրղինեանի ծննդեանը օրը, վերադարձնում ենք կիսանդրին իր տեղը, իր միջավայր: Ընդհանուր առմամբ՝ փոքրաթիւ են այն վայրերը, որոնք նուիրուած են հանրութեան կեանքում մեծ վաստակ ունեցած եւ հետք թողած կանանց: Նոր պատրաստուած այս կիսանդրին, տարածքի բարեկարգման որոշակի գործընթացները, յուսով եմ, կը նպաստեն Շուշանիկ Կուրղինեանի կեանքի եւ գործունէութեան հանրային իրազեկմանը, մասնաւորապէս՝ երեխաների, դպրոցականների շրջանում», նշած է նախարարը եւ յոյս յայտնած, որ այս գործընթացը պիտի ըլլայ շարունակական եւ պիտի նպաստէ մեծ աւանդ ու ներդրում ունեցած կանանց նուիրուած գործերու ստեղծման՝ մայրաքաղաքին եւ մարզերուն մէջ:

Ժաննա Անդրէասեանը շնորհակալութիւն յայտնած է Աշոտ Պաղտասարեանին՝ կիսանդրիի պատրաստման եւ անոր հետ կապուած բոլոր դժուարութիւնները յաղթահարելու համար: Նախարարին նշմամբ՝ 2023 թուականին կը նշուի ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Սարգիս Պաղտասարեանի ծննդեան 100-ամեակը, ինչի առնչութեամբ Սեպտեմբեր 5-ին Հայաստանի Նկարիչներու Միութեան սրահին մէջ տեղի պիտի ունենայ միջոցառում՝ նուիրուած անուանի արուեստագէտին:

Կիսանդրիի հեղինակ՝ քանդակագործ Աշոտ Պաղտասարեանը շնորհակալութիւն յայտնած է քանդակի ստեղծման գործին պետական հոգածութեան համար:

Յիշեցնենք, որ անուանի քանդակագործ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Պաղտասարեանը (1923-2001 թթ.) բազմաթիւ յայտնի քանդակներու հեղինակ է: Անոր կերտած յուշարձաններու շարքին կը պատկանին Յունան Աւետիսեանի, Աւետիք Իսահակեանի, Յակոբ Պարոնեանի, «Մենք ենք մեր սարերը», «Ղարաբաղցիները», «Մեղեդի», «Յաւերժ բարեկամութիւն», Դաւիթ Բեկի, Լոռեցի Սաքոյի յուշարձանները:

Քանդակագործին ստեղծագործութիւններէն կը պահուին Ռուսիոյ Թրեթեաքովեան պատկերասրահին մէջ, Արեւելքի ժողովուրդներու արուեստի (Մոսկուա), Լիթուանիոյ, Տաճիկիստանի թանգարաններուն, Հայաստանի ազգային պատկերասրահին մէջ:

Շուշանիկ Կուրղինեանը (Օգոստոս 1876, Ալեքսանդրապոլ – Նոյեմբեր 1927, Երեւան) ուսանած է ծննդավայրի Արղութեան օրիորդաց դպրոցը, ռուսական փրոկիմնազիայի մէջ: 1893 թուականին մտած է Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան շարքերը, քանի մը աղջիկներու հետ կազմած է առաջին Հնչակեան օրիորդաց խումբը:

Կուրղինեանը հասարակական աշխոյժ աշխատանք տարած է Կովկասի հայութեան շրջանակին մէջ. յայտնի եղած է անոր հիմնադրուած ակումբը Վլատիքավքազի մէջ: Անոր անունով փողոց, դպրոց եւ գրադարան կայ Կիւմրիի մէջ: Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքին մէջ Կուրղինեանի անունով փողոց եւ նրբանցք կայ:

# 11 Պատմամշակութային Կառոյց Յուշարձանի Կարգավիճակ Ստացած Է



Կայացած է ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնակրթութեան Նախարարութեան փորձագիտական յանձնաժողովի ընթացիկ տարուան երրորդ նիստը. Շարք մը պատմամշակութային կառոյցներ նորայայտ յուշարձանի կարգավիճակ ստացած են:

Քննարկումներու բերումով յանձնաժողովի անդամներուն դրական եզրակացութեամբ նորայայտ յուշարձանի կարգավիճակ ստացած են Երեւանի եւ հանրապետութեան հինգ մարզերու մէջ գտնուող 11 պատմամշակութային կառոյցներ:



Տեղական նշանակութեան յուշարձանի կարգավիճակ ստացած են Երեւան քաղաքի Շէնգաւիթ վարչական շրջանի «Հայրենիք» կինոթատրոնի շէնքը, որ կառուցուած է 1951 թ. (ճարտ. Գր. Աղաբաբեան), Քանաքեռ-Զէյթուն վարչական շրջանին մէջ գտնուող ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Բունիաթեանի անուան Կենսաքիմիագիտութեան հիմնարկի շէնքի գլխաւոր ճակատը զարդարող «Ծիլ եւ արեւ» (1970 թ.) (հեղինակ՝ Կ. Եղիազարեան, համահեղինակներ՝ Մ. Քամալեան, Յ. Ազիզեան) խճանկարը:

Յուշարձանի կարգավիճակ ստացած եւ պետական պահպանութեան վերցուած միւս յուշարձաններն են Արագածոտնի մարզի Արուճ գիւղի Սբ. Գրիգոր եկեղեցական համալիրի տարածքին գտնուող եռանաւ սրահը (վաղ միջնադար, V-VI դդ.), Մելիքգիւղ գիւղի Դամբարանադաշտը (վաղ պրոնզեդար, Ք. ա. III հազ., ուշ պրոնզ-վաղ երկաթ), Արմավիրի մարզի Բագարան գիւղի Երուանդակերտ քաղաքատեղին ((դաստակերտ) Ք.Ա. 3-րդ դ.□ Ք.Ե.. 14-րդ դ.), ապարանքը (Ք.Ա. III դ.- Ք.Ե. IV դ.) եւ նոյն մարզի Խանճեան գիւղի դամբարանադաշտը (Ք. Ա. II-I հազ.), Գեղարքունիքի մարզի Արտանիշ գիւղի Արտանիշ- 9 բնակատեղին (վաղ պրոնզի դարի II փուլ, Ք.Ա. 28-26-րդ դդ.) եւ Արտանիշ- 9 դամբարանադաշտը (Ք.Ա. 24-23-րդ դդ.), Սիւնիքի մարզի Տոլորս գիւղի Սբ. Հռիփսիմէ միանաւ պազիլիկ եկեղեցին (1861 թ.), Վայոց ձորի մարզի Ջիվա գիւղի ժայռափոր (վիմափոր) Ջրաղացը (XIII-XIV դդ.):

Հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ պատմութեան եւ մշակոյթի 32 անշարժ յուշարձաններու պահպանական գօտիներու նախագիծերը: Ըստ սահմանուած կարգի՝ անոնք պիտի ուղարկուին համայնքներու ղեկավարներու եւ տարածքային կառավարման պետական մարմիններու համաձայնեցման: Ներկայացուած եւ յանձնաժողովի հաւանութեան



արժանացած է Լոռիի մարզի Ակներ գիւղի քարայր-կացարաններով համալիրը (10-19-րդ դդ.) օգտագործման յանձնելու ծրագիրը:

www.massisweekly.com

# Մաhւ Ազգային Գործիչ Եւ Բարերար Նազար Նազարեանի



*Խոր ցաւով իմացանք որ 28 Օգոստոսին, 2023, 98 տարեկանին իր մահկանացուն կնքած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան սիւներէն, հայ ազգի բարերար եւ ճարտարարուեստի աշխարհի փայլուն առաջնորդ դէմքերէն՝ Տիար Նազար Նազարեան: Այս առթիւ Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահ՝ Պերճ Սեդրակեան հետեւեալ արտայայտութիւնը ունեցաւ.- «Մեր համայնքը՝ կորուստի խորագոյն զգացումով կը սգայ մեր սիրելի Նազար Նազարեանի մեկնումը: Ան միշտ պատրաստ էր հսկայածաւալ ներդրումներ կատարելու ի նպաստ յանդուգն նախաձեռնութիւններու, որոնք իր համոզումով, կրնային օգտակար հանդիսանալ լայն զանգուածներու: Ան ապրեցաւ նպատակասէւեռ եւ հոգեւոր արժէքներով առաջնորդուած կեանք մը: Ինծի համար մեծագոյն առանձնաշնորհում եւ պատիւ կը սեպեմ իր հետ ունեցած մտերմութիւնս, որպէս բարեկամ, վստահելի խորհրդական, հօրեղբայր եւ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչական Ժողովի երկար տարիներու անդամակից»:*

*Նազար Նազարեան ծնած էր Հալէպ, որդին Լեւոն եւ Սաթենիկ Նազարեաններու: Աւարտած էր Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, ուսանելով դեղագործութիւն: 1950-ական թուականներուն հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, ուր ամուսնացած է Արտեմիս Թոփճեանի հետ: Տասնամեակներ շարունակ մաս կազմած է Հ.Բ.Ը.Մ.ի առաջնորդներու եւ բարերարներու տիրական դէմքերու փաղանգին:*

*Հանգուցեալ Նազար Նազարեան ունեցած է տասնեակ տարիներու բեղումնաւոր գործունէութիւն: 1978-2007 ծառայած է որպէս Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչական ժողովի անդամ, վարելով փոխ-նախագահի եւ գանձապահի պաշտօններ, ապա մաս կազմելով հոգաբարձական խորհուրդին, վերջապէս որպէս պատուակալ վարչական անդամ: Ան կը յատկանշուէր որպէս Հ.Բ.Ը.Մ.ի ժամանակակից պատմութեան ամենահանգամանաւոր անձնաւորութիւններէն մէկը: Նազար եւ Արտեմիս Նազարեանները, լիաբուռն օգնած են համայնքային կեդրոններու ստեղծումին: Օժանդակած են դպրոցներու, նաեւ հաստատած են կրթական դրամաշնորհներ աշխարհի ամէն կողմ, Հ.Բ.Ը.Մ.ի դրօշին տակ: Իրենց կողմէ իրականացած կառոյցներէն կարելի է թուել Լեւոն եւ Սաթենիկ Նազարեան նախակրթարանը, Լիբանան, Լեւոն Նազարեան սրահը Նիւ Ճըրզի, Քեմփ Նուպարի Նազարեան կեդրոնը, Գալիֆորնիոյ Մանուկեան Տէմիրճեան վարժարանի Նազարեան մարզասրահը, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ բարերարութիւններ: Հ.Բ.Ը.Մ.ի հովանիին տակ հիմնած է Հայաստանի առաջին ճառագայթային ախտաճանաչման Լեւոն եւ Գլոտիա Նազարեան կեդրոնը:*

*2015-ին Նազար եւ Արտեմիս Նազարեաններուն շնորհիւ իրականացաւ Հայաստանի Հ.Բ.Ը.Մ.ի կեդրոնը Երեւանի մէջ: Իրենց բարերարութեամբ իրականացաւ Ս. Էջմիածնի վեհարանի շինութիւնը: Անոնք նոյնպէս բարերարներն են Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի Ս. Տրդատ մատուռի շինութեան:*

*Հ.Բ.Ը.Մ.ի աղբիւրները նորոգ հանգուցեալ բարերարը որակած են մարդ՝ որ սահմաններ չունէր իր ազգին ու եկեղեցիին ի նպաստ սպասաւորութեան մէջ:*

# Արցախի Փրկութեան Ծրագրի Փոխարէն

Շարունակուած էջ 2-էն

*մի անգամ հանրութիւնը ծանօթացել է 44-օրեայ պատերազմի օրերին, վերաբերում է կոմիտէ ստեղծելուն, որը պէտք է ձեւաւորեն «ընդդիմադիր կարող ուժերը»: Նրանք, ըստ տապալուած ՀՓՇ վարչապետացուի, պէտք է պայմանագիր կնքեն, 7-10 հոգանոց կոմիտէ ստեղծեն, «որի կայացրած որոշումներին դրա մէջը մտած բոլոր կուսակցութիւնները պէտք է ենթարկուեն»: «Այդ կոմիտէն պէտք է աշխարհին ցոյց տայ իր կամքը, եւ առաջին յաղթանակը այդ կոմիտէին պէտք է լինի իշխանութիւնը փոխելը, դա մեծ յաղթանակ է լինելու: Ձեր կարծիքով Պաքւում եւ Անկարայում ինչ՞ց կ'ընկալեն իշխանութիւն հանելը՝ որպէս մեծ պարտութիւն: Այսինքն, մենք այդ քայլով մեծ պարտութեան ենք բերում Պաքուին եւ Անկարային, եւ դա ամբողջ աշխարհը նորից կ'ողջունի, կ'ասեն՝ հայերը նորից ոտքի կանգնեցին, նրանք էն ազգն են, որի հետ կարելի է նորից գործ բռնել, իսկ այս տարածաշրջանում շատ ուժեր կան շահագրուած, մենք ուժեղ լինենք, իրանք մեզ հետ կը լինեն»:*

*Վազգէն Մանուկեանի պէս «մտքի տիտանը», այո՛, ճիշտ է ասում, տարածաշրջանում շատ ուժեր կան, որոնք շահագրգռուած են, բայց՝ ՀՀ-ի պետականութեան կորստով, ՀՀ-ն լուծարելու ու կուլ տալու պլաններ ունեն, անթաքոյց յայտարարում են այդ մասին: Եւ եթէ ՀՀ-ում գործող ռեւանշիստներին յաջողուի այդ պլանի իրագործմանը աջակցել, ապա նրանց ծառայութիւնները յաւուր պատշաճի կը վարձատրուեն իրենց հետ «գործ բռնած» շահագրգիռ ուժերի կողմից՝ Մանուկեանն ու միւսները կը վերանշանակուեն կոմիտէի անդամի պաշտօնում, բայց ոչ թէ Հայաստանի Հանրապետութեան, այլ հայկական գուբեռնիայի վերածուած՝ լուծարուած Հայաստանի Հանրապետութեան:*

*«ՍԻՎԻՔ»*

# Ջոհեր Դժբախտաբար Կային

Շարունակուած էջ 2 -էն

*կար, ըստ այդմ Հայաստանի համար գերխնդիր է պահելով «խաղաղութեան օրակարգը», պատրաստուել պատերազմի՝ հէնց այդ նոյն «օրակարգի» տրամաբանութեան շրջանակում, որովհետեւ Հայաստանի շուրջ թէկուզ յարաբերական խաղաղութեան ապահովման առաջնային նախադրեալը, ոչ միակ, ոչ բաւարար, բայց կարեւոր նախադրեալը դա համակարգային ուժի այնպիսի ապահովումն է, որը Ատրպէյճանին կը ստիպի շատ աւելի երկար մտածել որեւէ սադրանքի գնալուց առաջ, այդ կերպ էապէս սահմանափակելով Պաքուի ախորժակը: Հետեւաբար, հանրային ջանքը թերեւս պէտք է կենտրոնանայ հէնց այդ խնդիրների ուղղութեամբ, ըստ այդմ՝ հէնց այդ գետնի վրայ պէտք է լինեն կառավարութեանն ուղղուող հարցադրումները եւ պահանջները, ինչպէս նաեւ միւս քաղաքական ուժերի համար սահմանուող նշաձողերը:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Ինչո՞ւ է Ձախողուել Ուկրաինական

Շարունակուած էջ 6-էն

*մարտական մեքենայ օգտագործւում է մարտում, որտեղ երբեմն ամէն ինչ որոշւում է ոչ թէ րոպէներով, այլ վայրկեաններով, եւ, հետեւաբար, անձնակազմը պէտք է կարողանայ կառավարել այն ռեֆլեքսների մակարդակով, որը տեւական ժամանակ եւ հմտութիւններ է պահանջում:*

*Է. ուկրաինական անձնակազմերը պէտք է տիրապետեն »անծանօթ« մարտական մեքենաներին, եւ հետեւակայինները, հրետանաւորներն ու ինժեներները պէտք է սովորեն՝ ինչպէս աշխատել դրանց հետ:*

*Զ. արեւմտեան զրահամեքենաները ստեղծուել են աւելի շատ պաշտպանական պատերազմի համար, եւ, հետեւաբար, մեքենաներն աւելի պաշտպանուած են, աւելի ծանր, դրանց դիզայնն աւելի յարմար է դիրքային մարտերի համար:*

*Է. մէկ այլ խնդիր է համակարգերի բազմազանութիւնը, որ Արեւմուտքը մատակարարել եւ շարունակում է մատակարարել Ուկրաինային: Ըստ մամուլի՝ Ուկրաինայի Զու-ն զինուած է առնուազն 9 տեսակի զրահափոխադրիչներով, մէկ տասնեակից աւելի հետեւակի մարտական մեքենաներով եւ մօտ 10 տեսակի տանկով: Համակարգերի այս բազմազանութեան ամենամեծ խնդիրն այն է, որ իւրաքանչիւր տեսակի համար անհրաժեշտ է կազմակերպել պահեստամասերի, բաղադրիչների եւ զինամթերքի անդադար մատակարարում:*

*Ամփոփում*

*Չնայած վերը նշուած փաստերի յոռետեսական ու լաւատեսական ակնկալութիւններին, կարելի է առայժմ փաստել, որ հակայարձակումն ու կտրուկ բեկումը ձախողուել են: Միւս կողմից, Ուկրաինայի զինուած ուժերը դեռ պահպանում են կարողութիւնը, եթէ ոչ՝ վճռական յաջողութեան հասնելու, ապա՝ առաջնագիծը բաւականին առաջ տեղափոխելու: Չնայած ՌԴ Զու-ն մեծ ուժեր ունի հարաւում, սակայն ռեզերւների մեծ մասը կա՛մ արդէն գործարկուել են, կա՛մ տեղակայուել են պաշտպանական գօտում, իսկ Ուկրաինայի Զու-ն դեռ չի կիրառել իր պահուստների զգալի մասը: Ուստի, չնայած բոլոր թերութիւններին եւ կրած կորուստներին, Ուկրաինայի զինուած ուժերը դեռեւս տեսական հնարաւորութիւն ունեն վաղ թէ ուշ ճեղքելու ռուսական պաշտպանական գիծը:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԱՆԱՀԻՏ ՏԱՔԷՍԵԱՆ-ՊՈՂԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Մարսէյլ-Ֆրանսա) Ս.Դ.Հ.Կ.ի Սապահ Գիւլ մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի դստեր եւ մեր շրջանի գործունեայ անդամուհիներէն՝ Տէր եւ Տիկ. Լիւսի եւ Ցարուժ Պոյամեաններուն ու համայն հարազատներուն եւ բարեկամներուն:*

***

*ԱՆԱՀԻՏ ՏԱՔԷՍԵԱՆ-ՊՈՂԵԱՆԻ մահուան առթիւ Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.-ի Վարչութիւնը իր վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ցարուժ եւ Լիւսի Պոյամեաններուն:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**

**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**



Ձեր Ծանուցումները Վստահեցէք

**«Մասիս» Շաբաթաթերթին**

Massis2@earthlink.net (626) 797-7680

## Անգլիոյ Առաջնութիւն
## «Մանչեսթըր Սիթին» Մեծ Հաշուով Յաղթեց «Ֆուլհեմին»




ԱՊԼ 4-րդ հանգրուանին «Մանչեսթըր Սիթին» ընդունած էր «Ֆուլհեմին» եւ 5-1 հաշուով յաղթանակ տարաւ:

31-րդ վայրկեանին տանտէրերու կազմէն հաշիւը բացաւ Ալվարեսը, իսկ երկու վայրկեան անց Ռիմը հաւասարեցուց այն: Առաջին կէսին աւելացուած 5-րդ վայրկեանին Ակեն առաջ մղեց «Սիթիին»: 58, 70 եւ 90+5-րդ վայրկեաններուն Հոլանդը հեթ-թրիք ձեւակերպեց՝ 5-1:

Այս խաղէն յետոյ «Սիթին» 12 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Ֆուլհեմը» 4 կէտով՝ 13-րդ:

## «Արսենալ» Պարտութեան Մատնեց «Մանչեսթըր Եունայթըտին»

Անգլիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին Լոնտոնի «Արսենալը» ընդունեց «Մանչեսթըր Եունայթըտին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

27-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ հիւրերու անգլիացի յարձակող Մարկուս Ռեշֆորտը: Սակայն, քիչ անց հաւասարութիւնը վերականգնեց նորուէկիացի կիսապաշտպան Մարտին Էտեկորը:

«Արսենալին» յաղթանակ ապահովեցին աւելացուած ժամանակի ընթացքին՝ անգլիացի կիսապաշտպան Տեկլան Ռայսի եւ պրազիլացի յարձակող Գաբրիէլ Հեզուսի կոլերը:

«Արսենալ» 10 կէտով հաւասարեցաւ «Թոթենհեմին», «լիվերփուլին» ու «Ուեսթ Հեմին» եւ չորրորդն է: «Մանչեսթըր Եունայթըտ» 11-րդ տեղն է եւ ունի 6 կէտ:

## «Լիվերփուլ» Ուժեղ Էր «Ասթոն Վիլայէն»

Անգլիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին «Լիվերփուլ» իր դաշտին վրայ «Աստոն Վիլային» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

«Լիվերփուլի» կոլերը նշանակեցին հունգարացի կիսապաշտպան Տոմինիք Սոպոսլաին ու եգիպտացի յարձակող Մոհամետ Սալէհը: Սեփական բերդը գրաւեց հիւրերու լեհ պաշտպան Մեթի Քեշը:

«Լիվերփուլը» 10 կէտով հաւասարեցաւ «Արսենալին», «Թոթենհեմին» ու «Ուեսթ Հեմին» եւ երրորդն է:

## Սպանիոյ Առաջնութիւն
## Գունդէի եւ Լեւանտովսկի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Պարսելոնային»

Սպանիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» հիւրընկալուեցաւ «Օսասունայի» կողմէ եւ հասաւ յաղթանակի 2:1 արդիւնքով:

«Պարսելոնայի» կազմէն աչքի ինկան ֆրանսացի պաշտպան Ժիւլ Գունդէն եւ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկին:

«Պարսելոնան» 10 կէտով հաւասարեցաւ «Ժիրոնային» եւ երրորդն է: Առաջատարը «Ռեալն» է, որ ունի 12 կէտ:

## Մատրիտի «Ռեալը» Կամային Յաղթանակ Տարաւ

Սպանական Լա լիկայի 4-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» սեփական յարկի կամային յաղթանակի հասաւ «Խետաֆէի» նկատմամբ:

11-րդ վայրկեանին Մայորալն առաջ մղեց հիւրերուն: Խումբերը ընդմիջման գնացին այս հաշուով: Երկրորդ կէսի սկզբնամասին տանտէրերը կարողացան վերականգնել հաշուի հաւասարակշռութիւնը: Կոլի հեղինակ դարձաւ Ջոսելուն: Աւելացուած ժամանակին մատրիտեան խումբը խփեց նաեւ յաղթական կոլը: Ընթացիկ առաջնութեան իր 5-րդ կոլը խփեց Ջուդ Բելինգեմը:

Այս յաղթանակէն յետոյ «Ռեալը» 12 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

## «Ինթեր Մայամի» - «Լոս Անճելըս»՝ 3:1. Մեսիի 2 Կոլային Փոխանցումը




ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական խաղին «Ինթեր Մայամին» հիւրընկալուեցաւ «Լոս Անճելըսի» կողմէ եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

«Ինթեր Մայամիի» արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին հիմնական կազմին մէջ էր եւ կատարեց երկու կոլային փոխանցում:

«Ինթեր Մայամիի» կոլերը նշանակեցին արժենթինցի յարձակող Ֆակունտօ Ֆարիասը, Սպանացի պաշտպան Ճորտի Ալպան եւ էկուատորցի յարձակող Լեոնարտօ Գամբանան:

«Ինթեր Մայամին» Արեւելեան Քոնֆերանսի մէջ 25 կէտով 14-րդ տեղը կը գրաւէ:

## Էտկար Սեւիքեանը Չէ Ընդունած Ռուսաստանի Հաւաքականին Հրաւէրը




Ռուսական «Փարի Նիժնի Նովկորոտ»ի 22-ամեայ յարձակող Էտկար Սեւիքեանը չէ ընդունած Ռուսաստանի հաւաքականին հրաւէրը:

Այդ մասին ֆութպոլիստին յայտարարութիւնը տարածած է ակումբին մամուլի ծառայութիւնը:

«Շատ հաճելի է, որ Ռուսաստանի հաւաքականի մարզչական շտաբը ուշադրութիւն դարձուցած եւ գնահատած է իմ աշխատանքս եւ արդիւնքները: Ռուսաստանը ինծի շատ բան տուած է իմ արհեստավարժութեան եւ ասպարէզին համար: Սակայն ես չեմ կրնար ընդունիլ Ռուսաստանի հաւաքականին հրաւէրը, քանի որ արդէն որոշած եմ հանդէս գալ Հայաստանի հաւաքականին մէջ: Յոյս ունիմ, որ երկրպագուները ըմբռնումով կ'ընդունին ընտրութիւնս ու ինքնուրոյն որոշումս», նշած է Էտկար Սեւիքեանը:

Հայաստանի հաւաքականը Թուրքիոյ եւ Խրուաթիոյ հաւաքականներուն դէմ յառաջիկայ ընտրական հանդիպումներուն չէ հրաւիրած Սեւիքեանը, որ Մոսկուայի «Լոքոմոթիվ»ի սան է, 2017-ին տեղափոխուած էր սպանական «Լեւանթէ»: Այս ամրան ան ազատ գործակալի կարգավիճակով միացած է «Փարի Նիժնի Նովկորոտ»ին:

## Ախոյեաններու Լիկայի Վիճակահանութիւնը Խմբային Հանգրուանին Միմեանց Դէմ Է Հանած Մխիթարեանի ու Զախարեանի Ակումբներուն

Մոնաքոյի մէջ կայացաւ Ախոյեաններու լիկայի խմբային մրցաշարի վիճակահանութիւնը:

Ինչպէս կը տեղեկացնէ ՈՒԵՖԱ-ի պաշտօնական կայքը, խմբային փուլը կը մեկնարկէ Սեպտեմբերի 19-ին ու կ'աւարտի Դեկտեմբերի 13-ին, իսկ եզրափակիչը կը կայանայ 2024թ. Յունիսի 1-ին Լոնտոնի «Ուեմբլի» մարզադաշտին մէջ:

Յատկանշական է, որ Իտալիայի գաւաթակիր «Ինտերն» ընդգրկուած է D խումբին մէջ, ուր ուժերը կը չափէ սպանական «Ռեալ Սոսյեդադի» հետ, իսկ այդ կը նշանակէ, որ Հենրիխ Մխիթարեանը ու Արսէն Զախարեանը առնուազն երկու անգամ կարող են մրցիլ հեղինակաւոր մրցաշարի շրջանակին մէջ: Աւելի շուտ «Ռեալ Սոսյեդադի» Նորեկ Զախարեանը յայտարարած էր, որ Ախոյեաններու լիկայի մէջ խաղալը իր երազանքի իրականացումն է եւ ընթացիկ խաղարկութեան կը ցանկանար մրցիլ «Ինտերի» դէմ, ուր կը խաղայ Հենրիխ Մխիթարեանը:

«Հրաշալի կը լինի խաղալ այն ֆուտպոլիստի դէմ, որ եղած է մանկութեանս կուռքը: Բոլոր ակումբներուն հետեւած եմ Հենրիխի ելոյթներուն: Մխիթարեանի արհեստավարժ գործը այդքան լաւ եղաւ, քանի որ ան ամբողջութեամբ բացայայտեց իր տաղանդը եւ ճիշտ տարիքին տեղափոխուեցաւ Եւրոպա: Չեմ կրնար ըսել, որ մենք յաճախ կը շփուինք, բայց կապ կը պահենք: Ան ինձ խորհուրդ տուած է, բայց չեմ կրնար ըսել՝ որն է այդ խորհուրդը»,- Նոբել Առուստամեանի հետ հարցազրոյցին մէջ նշած է 20-ամեայ ֆուտպոլիստը:

## Լուկաս Սէլարայեանի Առաջին Կոլը Սէուտական Արաբիոյ Մէջ



Սէուտեան Արապիայի առաջնութեան 5-րդ հանգրուանին «Ալ Ֆաթեհը» տանը 5-1 հաշուով յաղթեց «Ալ Ահլիին»:

59-րդ վայրկեանին տանտէրերու կազմէն աչքի ինկաւ Հայաստանի ազգային հաւաքականի ֆուտպոլիստ Լուկաս Սելարայեանը՝ հաշիւը դարձնելով 2-1:

Սելարայեանն իր խումբի մեկնարկային կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին:

«Ալ Ֆաթեհը» 7-րդ տեղը կը գրաւէ:

## «Ինթերի» Տպաւորիչ Յաղթանակը՝ 4:0 Արդիւնքով

Իտալիոյ առաջնութեան երրորդ հանգրուանին «Ինթերը» Միլանի մէջ մրցեցաւ «Ֆիորենթինայի» հետ: Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ հանդիպումին:

«Ինթեր» 9 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: Նոյնքան կէտ ունի երկրորդ տեղը գտնուող «Միլանը»:

# ARMENIAN INDEPENDENCE DAY Festival

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

# ՓԱՌԱՏՕՆ

## SUNDAY, SEPTEMBER 17, 2023

STARTING AT 11:00AM

**VERDUGO PARK / GLENDALE**

1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208

ORGANIZED BY

**NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION**

GENERAL SPONSOR

SAHARA MIDDLE EASTERN CUISINE
2226 E. Colorado Blvd.
Pasadena, CA 91107
626.795.6900
www.saharapasadena.com

GLENDALE GALLERIA

SPONSORS

State Senator Anthony J. Portantino

LILIT BAKERY CAFE

Kathryn BARGER
5th District Supervisor • County of Los Angeles

Vrej Pastry

UMPQUA BANK

MEDIA SPONSORS

SATYR GROUP

Մասիս

www.massispost.com

LIVE MUSIC

ARMENIAN FOOD

**FREE ADMISSION**

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

KIDS GAMES

ART EXHIBITION

To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցէք՝ Նոր Սերունդ Միութիւն

**(818) 391-7938**